



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1912

ԼՈՒՍԱԲԵՐ

3676


Բ ՏՄԻԲ

491.99-8

L-61







## 1. ՀՐԱԺԵՇՏ

Դէ՛ , մնաք բարով , արօտներ ժպտուն ,  
ամառը անցաւ , հօտը կ'իջնէ տուն :

Ես կու գանք ձեզի մենք նորեկ գարնան ,  
երբ թռչուններու երգերն արթննան ,  
երբ լեռները թարմ հագուին կանաչով ,  
երբ ջրերը ժիր վազեն կարկաչով :

Դէ՛ , մնաք բարով , արօտներ ժպտուն ,  
ամառը անցաւ , հօտը կ'իջնէ տուն :

Ո՞վ է այս մնաք-բարով բառը , հրաժեշտ տողը :  
Հօտը ինչո՞ւ աւան սարեհն կ'իջնէ : Չմեղր ո՞ւր կ'անցրնէ :

## 2. ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐՈՒ ԶՈՒՆ

1.

Աշուն էր :

Ծիծիռնակները ամեն իրիկուն կը հաւաքուէին , կը  
շարուէին տանիքի մը եզերքը կամ ճիւղերուն վրայ ու կը  
ճլլային անհանգիստ :

— Տեսէք , — կ'ըսէր մէկը . — ինչպէս խոտը զեղներ է :  
Ամբողջ օրը ասդին-անդին ինկայ , հազիւ քանի մը թիթեռ  
ճարեցի :

— Սոս եղիր, սոս, — կ'աւելցնէր միւսը. — ծառերը մերկ կը դառնան, եղէգները կը չորնան, մժողովները ալ չեն երկար: Լաւ է, գոնէ աղբանոցներուն վրայ դեռ ճանճերը կը դժվժան:

— Բայց ծրր, ծրր ինչպէս կարճացեր է. — թևերը թափահարելով մէջ ինկաւ ուրիշ մը: — Դեռ կշտացած ալ չես ըլլար, մէյ մըն ալ տեսար՝ մութը կոխեց:

Սյապէս կը հաւաքուէին ու կը գանգատէին ծիծեռնակները:

2.

Իրիկուն մըն ալ բոլորը միասին ժողվըւեցան բարձր գանգաղատան գլուխը: Սյնքան շատ էին, որ գանգաղատունը կարծես սև ներկուած ըլլար:

— Չէ, չէ, — կ'ըսէին ծերերը, — ալ դիմանալու բան չէ: Քիչ մըն ալ որ մնանք՝ սովամահ կ'ըլլանք:

— Հապա ի՞նչ ընենք. — մոլորուած կը հարցընէին նորերը:

— Պիտի չուենք. — յայտնեցին մեծերը:

Սյգ գիշերը բոլոր ծիծեռնակները միասին անցուցին եկեղեցիի գմբէթին: Իսկ առտուն կանուխ, լուսաբացին, ամբողջ երամը ելաւ ու ճուղելով պտոյտներ կ'ընէր տըներու գլխուն:

— Մնաք բարով, մեր սիրունիկ բոյնիկներ. — կը կանչէին ծերերը:

— Մնաք բարով, մեր փոքրիկ օբօբաններ. — կը կանչէին նորերը:

Ու բոլորը միասին սաւանեցան վեր, բարձր, բարձր, ճամբայ ինկան դէպի հարաւ, դէպի տաք երկիրները:

Բարի ճանապարհ, բարի ծիծեռնակներ:

Ուրիշ ի՞նչ չուող բռնուններ գիտես: Ինչու կը չուեն լռչուններ:

### 3. ԴՊՐՈՑԻ ՃԱՄԲԱՆ

Չմեռուան բուքին, սառնամանիքին,  
դպրոցի ճամբան  
դժուար է, երկար՝ շատերուն համար:

Չուարթ գարունքին, ծաղկին ու երգին  
դպրոցի ճամբան  
կարծես աւելի կարճ է, հաճելի:

Իսկ երբ սէր ունի մէկը ուսումի,  
դպրոցի ճամբան  
միշտ է կարճ, սիրուն, ձմեռ թէ գարուն:



### 4. ԴԱՍԻ ԱՏԵՆ

Սմբողջ դասարանը լուռ կը գրէր: Կը լսուէր միայն գրիչներուն ճոճոցը, երբեմն ալ ուսուցչին ձայնը, որը մէկուն կամ մէկալին սխալը կ'ուզէր:

Սեղրակը ամուր սեղմեր էր իր գրիչը մատներուն մէջ ու շատ կ'աշխատէր գծերը շիտակ գրելու:

Բայց քիչ մը վերջը յոգնեցաւ, գլուխը հետգհետէ սկսաւ վար կախուիլ, մատները աւելի ու աւելի դանդաղ կը շար-

ժուէին, ուսուցչի ձայնն ալ կամաց-կամաց կը հեռանար, կարծես ուրիշ սենեակէ մը կու գար:

Եւ Սեդրակին այնպէս թուեցաւ, իբրև թէ ինքը իրենց տունն է ու իր գրածը ցոյց կու տայ մայրիկին. «Նայէ, ինչպէս գեղեցիկ է, ինչպէս շիտակ»: Մայրիկն ալ կը գովէ ու կը շոյէ անոր գլուխը:

Յանկարծ բացաւ աչքերը, նայեցաւ աջ ու ձախ: Ընկերները ընդհատեր էին գրելը ու խնդարով անոր կը նայէին:

Սեդրակը վախցած վեր ցատկեց ու լալ կ'ուզէր, բայց ուսուցիչը ժպտեցաւ անուշ ու շարունակելով շոյել անոր գլուխը՝ ըսաւ.

— Քունդ տարա՛ւ, հա՛, պղտիկս. յոգնեցա՛ր: Բան չը կայ, այս վայրկեանիս զանգը պիտի տան. կը վազես քունդ կը փախչի:

Սեդրակի փունք ինչո՞ւ սարսաւ: Քունք ինչո՞ւ համար է:

Սեդրակը ինչո՞ւ երագին մեջը տեսաւ, իբրև քե մայր կը տոյր անոր գլուխը:

#### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ (1)

Ճերմակ դաշտեր, սև-սև հունտեր,  
ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

### 5. Ա Ն Ճ Ա Ր Ա Կ Ի Ն Ա Ր Դ Ա Ր Ա Յ Ո Ւ Մ Ը

Նապաստակը կը վազէր, շունն ալ ետևէն, և այնպէս արագ կը վազէր, որ շունը հասնել չը կրցաւ:

— Է՛յ, բարկկա՛մ, այդ փոքրիկը քեզմէ աղէկ կը վազէ.— ըսաւ շան տէրը յանդիմանելով:

— Դէ՛, իհարկէ՛, ես կը վազեմ փորիս համար, ան կը վազէ մորթին համար. — ինքըզինքը արդարացուց շունը, պոչը քաշեց ու գնաց մէկզի:

Այսպիսի պիտի մտածէր կտրին շունը:



### 6. Փ Ո Ք Ր Ի Կ Խ Ա Ն Ո Ւ Յ Պ Ա Ն Ը

1.

— Մամի՛կ, մամի՛կ, եկուր խաղանք. — կը խնդրէր փոքրիկ Երուանդը:

— Լս՛ւ, խաղանք. — համաձայնեցաւ մամիկը:

— Խանութ խաղանք, հա՛, մամիկ:

— Լս՛ւ, խանութ խաղանք:

Ու Երուանդը վազեց, բերաւ մէկ-երկու աթոռ, դրաւ իրարու քով.

— Ասիկա սեղանը. — ըսաւ ուրախ-ուրախ:

Վրան շարեց տուփեր, գրքեր, լրագիրներ, քրոջ տիկնիկը, իր հոլը, ուրիշ խաղալիքներ, նորէն տուփեր, նորէն գրքեր, մէկ-երկու հատ ալ շիշ, խնձորը, որ դեռ չէր կերեր, անոր քովիկն ալ իր փոքրիկ գրպանի դանակը:

Խանութը պատրաստ էր:

Վազեց քովի սենեակէն բերաւ պապիկի գունաւոր մեծ

Թաշկինակը , կապեց առջևը գոգնոցի պէս , երկար մատիտ մը անցուց ականջին ետևը և կեցաւ խանութին առջևը :

— Այս կողմը հրամեցէք , այս կողմը հրամեցէք . ո՞վ կ'ուզէ լաւ խնձոր , խոշոր-խոշոր . ո՞վ կ'ուզէ գինի , անուշ գինի . ո՞վ կ'ուզէ բողկ , կարմիր-կարմիր . պահ , պահ , պահ , պահ :

2 .

— Շաքար ունի՞ս , խանութպան աղբար . — հարցուց մամիկը :

— Ինչքան որ սիրտդ ուզէ . — պատասխանեց խանութպանը :

— Լաւ . հինգ արշին շաքար տուր ինծի :

Փոքրիկ խանութպանի խնդալը եկաւ , բայց դսպեց :

— Ներեցէք , տիկին , մենք շաքարը արշինով չենք ծախեր . — ըսաւ քաղաքավարի կերպով :

— Հապա ինչո՞վ . — հարցուց մամիկը :

— Շաքարը կը ծախենք քաշով :

— Քաշո՞վ : Հա , իրաւ որ . — ըսաւ մամիկը : — Դէ , խնդրեմ , ինծի հինգ քաշ շաքար տուր , երկու քաշ ալ հաւկիթ :

— Ներեցէք , տիկին , — ժպտեցաւ խանութպանը , — մենք հաւկիթը քաշով չենք ծախեր :

— Հապա ինչո՞վ . — հարցուց մամիկը :

— Հաւկիթը կը ծախենք հատով :

— Հատո՞վ : Հա , իրաւ որ . — ըսաւ մամիկը : — Դէ , խնդրեմ , ինծի քսան հատ հաւկիթ տուր , հարիւր հատ ալ գինի :

Փոքրիկ խանութպանը այս անգամ արդէն խնդուքը բռնել չը կրցաւ :

— Ներեցէք , տիկին , մենք գինին հատով չենք ծախեր :

— Հապա ինչո՞վ . — հարցուց մամիկը :

— Գինին կը ծախենք շիշով :

8

— Շիշո՞վ : Հա , իրաւ որ : Դէ , ինծի երկու շիշ գինի տուր , երեք շիշ ալ լուցկի :

— Ներեցէք , տիկին , լուցկին մենք շիշով չենք ծախեր :

— Հապա ինչո՞վ . — հարցուց մամիկը :

— Լուցկին կը ծախենք տուփով :

— Տուփո՞վ : Հա , իրաւ որ : Դէ , ինծի երկու տուփ լուցկի տուր , եօթը տուփ ալ բողկ :

— Բայց , տիկին , ո՞վ է լսեր , որ բողկը տուփով ծախեն :

— Հապա ինչո՞վ . — հարցուց մամիկը :

— Բողկը կը ծախեն . . . բողկը . . . բողկը . . . — կմկմաց խանութպանը ու չիմացաւ թէ ինչով ծախէ իր բողկը :

Դուն գիտե՞ս քե ինչով կը ծախեն բողկը :

Իսկ ի՞նչը կը ծախեն արեփնով . ի՞նչը կը ծախեն քաշով . ի՞նչ բաներ կը ծախեն հասով , շիշով , տուփով :

Ուրիշ ինչո՞վ կարելի է բան ծախել :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(2)


Ինքը հողին ,  
մօրուքը շողին :

## 7. Ա Շ Ո Ւ Ն Ը

Դեղնած դաշտերուն իջեր է աշուն  
ու անտառները ներկեր է նախշուն .  
պաղ մէզին մէջէն կը փչէ քամին ,  
կ'առնէ կը քշէ տերևը դեղին .  
տխուր դաշտերէն մարդ ու անասուն  
քիչ-քիչ կը քաշուին իրենց որջն ու տուն :

9

## 8. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԻՐ ՊՈԶԸ



Մարէն աղուէսն իջաւ ցած,  
գիւղի շներն անիծած  
առին հոտը, դուրս ինկան,  
մեծ ու պատիկ՝ ինչ որ կան,  
հաշոց, աղմուկ հանեցին  
ու ետևէն լարեցին:

Իսկ աղուէսը վազէ վազ,  
շունչը կտրած, հազիւ հազ  
ծակ մը գտաւ,  
մէջը մտաւ,  
հանգստացաւ,  
ինքն իր վրան  
որ նայեցաւ,  
յանկարծ ըսաւ.  
— Ա՞ս ինչ բան էր,  
իմ անդամներ,

նրդդ կ'ուզէր,  
որ ձեր տէրը  
քրքրէին  
այդ շները:

Դո՞ւք, օրինակ,  
կարճ ու բարակ,  
թեթեւ-արագ  
իմ ոտիկներ:

«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,  
մեր տիրական».  
ոտքերն ըսին  
աղուէսին:

— Դո՞ւք, օրինակ,  
վառած ճրագ,  
լոյս-արեգակ  
իմ աչուկներ:

«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,  
մեր տիրական»  
աչքերն ըսին  
աղուէսին:

— Օրինակ, դո՞ւք,  
նարմանազուկ,  
սուր-սուր լսուկ  
իմ ականջներ:

«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,  
մեր տիրական»  
ականջներն ըսին  
աղուէսին:

— Եւ դո՞ւն, պոչի՛կ,  
իմ խուճուճիկ,  
խունճիկ-մունճիկ,  
ոսկէ-փնջիկ:

«Այո՛, աղուէ՛ս,  
տաղուիս, աղուիս,  
պատէն կախուիս,  
կ'ուզէի ես  
քու ոտքերուդ  
մէջն իյնայի,  
խանգարէի,  
ու դուն տայիր  
գլուխ-կոնծի:

— Մո՛ւս, պապանծիս,  
գետինն անցնիս,  
ինքնահաւան,  
միշտ մէջընկան,  
գիտնի տափան,  
վազքիս խափան.  
ա՛յս վայրկեանիս  
քեզի ցոյց տամ.  
այ՛, շներուն

բերանը տամ:  
Ու աղուէսը  
պոչին կէսը  
հանեց մէկէն  
խորը ծակէն:  
Շներն ամեն  
աս որ տեսան,  
մեծ ու պատիկ  
ինչքան որ կան,  
վրայ ինկան,  
պոչէն խածին,  
հա՛ քաշեցին,  
քաշքշեցին,  
և ալ ի՛նչ պոչ,  
աղուէսն ամբողջ  
դուրս հանեցին  
ծակէն իր նեղ,  
առին մէջտեղ,  
բուրդ գզեցին,  
բզրկտեցին:



## 9. ՍՈՒՏԱՍԱՆ

1.

Կար ու չը կար թագաւոր մը : Այս թագաւորի խելքին կը փչէ , կ'ելնէ կը յայտարարէ իր երկրին մէջ , թէ

« Ո՛վ այնպէս սուտ մը ըսէ , որ ես ըսեմ՝ սուտ է , թագաւորութեանս կէսը կու տամ անոր » :

Կու գայ հովիւ մը , կ'ըսէ .

— Թագաւորն ապրած կենայ , իմ հայրս դակնակ մը ունէր , որ հոսկէ կ'երկրնցնէր , երկրնքի աստղերը կը խառնէր :

— Կը պատահի . — կը պատասխանէ թագաւորը : — Իմ պապս ալ չիբուխ մը ունէր , մէկ ծայրը բերնին կը դնէր , միւսը կ'երկրնցնէր , արեգակէն կը վառէր :

Ստախօսը գլուխը քերելով կ'ելնէ դուրս :

2.

Կու գայ դերձակ մը , կ'ըսէ .

— Ներողութիւն , թագաւոր , ես աւելի կանուխ պիտի գայի , ուշացայ : Երէկ շատ անձրև եկաւ , կայծակները զարկին , երկինքը պատուտեցաւ , գացեր էի կարկտելու :

— Հա՛ . աղէկ էիր ըրեր . — կ'ըսէ թագաւորը : — Բայց յաւ չես կարկտեր . այս առտու նորէն քիչ մը անձրև կաթկթեց :

Աս ալ ծոծրակը կը քերէ ու կ'ելնէ դուրս :

3.

Կը մտնէ աղքատ գիւղացի մը , կոտը թւին տակը :

— Դո՛ւն ինչ կ'ուզես , ա՛յ մարդ . — կը հարցընէ թագաւորը :

— Չե՞ որ ինձի կոտ մը ոսկի ես պարտ . եկեր եմ՝ տանիմ :

— Կոտ մը ոսկի՞ . — կը խնդայ թագաւորը : — Ես քեզի կոտ մը ոսկի՞ :

— Ըսելդ ի՞նչ է . ուրեմն սո՛ւտ կը խօսիմ . — վրայ կը բերէ գիւղացին : — Եթէ սուտ է ըսածս՝ թագաւորութեանդ կէսը տուր :

12

— Չէ՛ , չէ՛ , սուտ չես ըսեր . — խօսքը կը փոխէ թագաւորը :

— Թէ սուտ չեմ ըսեր՝ տուր կոտ մը ոսկիս :

Թագաւորը ի՞նչ ըրաւ :

Քանի՞ usախօս կայ այս հեքիաթին մէջ :

Գիւղացին ինչո՞վ յայրեց :

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(3)

Գորգ մը՝ թոթուել չըլլար :

Ոսկի՛ համրել չըլլար :

## 10. ԳԻՇԵՐ



Խաղաղ գիշեր է , գեղեցիկ ու զով , աշխարհ կը նիրհէ անուշ երազով :

Ան ի՞նչպէս սիրուն մեղմ կը նային վար հանդարտ աստղերուն աշուկները վառ :

Ինչպէս անվրդով խոր է երկինքը , կը սահի ժպտով լուսնին մահիկը :

Խաղաղ գիշեր է գեղեցիկ ու զով , աշխարհ կը նիրհէ անուշ երազով :

13

## 11. ԶՈՒՐԸ ՓԱԽԱԻ

Տանտիկինը շուրը լեցուց կաթսային մէջ ու դրաւ կրակին :

Քանի կաթսան տաքցաւ, շուրը այնքան սկսաւ անհանգստութիւն զգայ : Սիրտը նեղացաւ, շուռ ու մուռ եկաւ, տակն ու վրայ եղաւ : Վեր-վեր կը ցատկէր, կը քրթքրթար, կը մրթմրթար, կը փշտացնէր :

Կը կուէր ամանին հետ, կը թքնէր, կը հրէր, կը շարժէր որ կերպ մը կրակին վրայէն վար ձգէ ամանը ու ինքը ազատուի : Չը կըրցաւ : Տեսաւ՝ կաթսան շատ ամուր է նստեր կասկարային վրայ. աւելի գայրացաւ, փրփրեցաւ, բարձրացաւ, սկսաւ գոլորշի դառնալ ու փախչիլ դէպի վեր . . .

Լաւ է որ տանտիկինը վրայ հասաւ :

Ի՞նչ պիտի ըլլար, եթէ սանտիկինը վրայ չը հասներ : Գոլորշին ո՞ր կը փախչէր : Եթէ երկնի վրայ գոլորշի շատ հաւաքուի՝ ի՞նչ կը դառնայ :

## 12. ԱՄՊԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Ամպը ունի չորս երեխայ . չորսն ալ շատ աղէկ կը ճանչնար :

Մեծը ան է, որ կու գայ յաճախ կը զարնէ մեր լուսամուտները ու աղմուկ կը բարձրացնէ տանիքներուն վրայ : Երբեմն ալ ուղղակի կը խենթենայ, կը թափուի ու կը թափուի, կ'երթայ կը լեցուի գետերը . անոնք ալ կ'ուռին, կը վարարին, դուրս կու գան օփերէն ու կը ծածկեն ամեն բան : Թէ չէ՝ ինքը բնութեամբ վատ չէ . ընդհակառակը, այնպէս կը սիրէ ծառն ու ծաղիկը, կ'իջնէ, կը զովցընէ ծարաւ կանաչները, շուր կու տայ չորցած հողին :

Ասոր քուրիկը ճերմակ աղջիկ մըն է : Յուրտերը կու գան թէ չէ, վրայ կը հասնի, կը փռէ իր փափուկ վերմակը մերկ անտառներուն ու մերկ դաշտերուն վրայ, որ չը մրսին փոքրիկ սերմերը հողին տակ :

Բայց ի՞նչ չարն է ասոնց միւս եղբայրը . կու գայ միշտ իրեն նման անպիտան հովի մը հետ, և իբրև թէ կատակ է ըրածը, կը ջարդէ, կը փշրէ ինչ որ ճամբան պատահի՝ ապակի, ծառ, ճիւղ, կը փճացնէ խոտ ու արտ :

Ամպի երեխաներէն ամենէն պզտիկը քնքուշ աղջիկ մըն է . ան որ գարնանը ամեն գիշեր մարգրիտ կը շարէ ծաղիկներու ու խոտերու կրծքին, իսկ ձմեռը ցուրտին կու գայ մեր լուսամուտներուն ապակիին վրայ գեղեցիկ կաթնագոյն պատկերներ կը գծէ իր սառած մատիկներովը :

Ահա՛ ձեզի ամպի չորս երեխաները՝ Անձրևը, Ձիւնը, Կարկուտն ու Յօղիկը : Չէ՞ որ ըսի՝ չորսն ալ շատ աղէկ կը ճանչնար :

Այս չորսն ամեն մեկը սաւան ո՞ր եղանակին աւելի կ'ըլլայ :

Սառած ցօղին ի՞նչ անուն կու տան :

## 13. Վ Է Ճ

Գետինը ըսաւ . Ես աշխարհքի թագաւորն եմ :

Ձիւնը ըսաւ . Բայց ես կու գամ քեզ կը ծածկեմ :


Քամին ըսաւ . Ձիւն, ես որ գամ՝ ո՞ւր կը մտնես :

Ձիւնը ըսաւ . Գաս՝ կը մտնեմ քարերուն տակ :

Անձրևն ըսաւ . Իսկ ե՞ս որ գամ՝ ո՞ւր կը մտնես :

Ձիւնը ըսաւ . Քե՞զ ով հարցուց, ա՛յ թաց-բերան :

## 14. ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ



Լեռան լանջէն,  
 մէզին մէջէն,  
 կը մրմնջէ  
 ու կը կանչէ  
 ժայռին տակի  
 մերկ գետակի  
 ջուրը բարակ,  
 ջուրը մինակ,  
 տրտում-տխուր.  
 — Վա՛շ, վի՛շ, վա՛շ, վի՛շ,  
 ուր կորան, ուր,  
 տերև ու խոտ,  
 վարդը շաղոտ,  
 հոտ ու թռչուն,  
 բառաչ, հաջիւն,  
 սարևորն ուրախ,  
 սրինգ ու խաղ,  
 ուր կորան, ուր ...

## 15. ԵԿԵՂԵՑԻՆ ԿՈՐԵՐ Է

— Մ՞ս ինչ բան է, ուր է մեր դիմացի եկեղեցին :  
 Ո՛ւր է մեր եկեղեցին իր սուր գմբէթովը : Մայրիկ, մայրիկ,  
 եկուր նայէ, քանդեր են այս գիշեր մեր եկեղեցին . եկեղե-  
 ցին չը կայ, կորեր է :

Բայց մայրիկը կ'ուշանար, խոհանոցը գործ ունէր, կաթ  
 կը տաքցնէր, որ մեծ քուրիկը խմէ ու զպրոց երթայ :

Աս ինչ զարմանալի բան է : Մօտակայ տներն անգամ  
 հազիւ կ'երևան . վարը, փողոցը, մարդիկ արագ-արագ կը  
 վազեն իրենց գործին, բայց ճանչնալ կարելի չէ, կարծես  
 մուխի մէջէն կը քալեն :

Արփենիկը ալ չը համբերեց ու վազեց խոհանոց :

— Մայրիկ, մայրիկ, գիտե՞ս, այս գիշեր մեր եկեղեցին  
 այրուեր է :

— Ինչէր կը խօսիս :

— Հապա՛, այրեր են : Այ չը կայ մեր եկեղեցին, իսկ  
 փողոցը լեցուն ծուխ է : Եկուր նայէ :

Իսկ մայրիկը հանգիստ իր գործը կը շարունակէր ու կը  
 խնդար սրտանց :

— Ինչո՞ւ կը խնդաս, մայրիկ :

— Դուն գեռ մառախուղ չե՞ս տեսեր, աղջի՛կս : Մա-  
 ախուղ է :

— Մառախուղ : Ի՞նչ բան է մառախուղը :

Դուն կրնա՞ս բտր Արփենիկին, քե ի՞նչ բան է մառախուղը : Մառա-  
 խուղը ամպէն ինչո՞վ կը տարբերուի :

## 16. ՄԱՐԴ ԶԸ ԿԱՅ

— Ո՞վ կայ տունը :

— Ո՞վ . մարդ չը կայ .

ես ու պապըս ,

հայրըս , մայրըս

երկու քոյրըս

երկու քեռիս

երեք հարսըս :

Հապա՛ ինչո՞ւ կրտե՛ տունը մարդ չը կայ :

## 17. ԾԱԼԱԿՏԱՐԸ

Կար ու չը կ'որ աղքատ մարդ մը կար :

Այս աղքատ մարդը կ'երթայ կը դառնայ ձկնորսի մը շալակտարը : Օրական քանի մը ձուկ կը վաստկի , էը տանի տուն , ատով ալ կ'ապրին ինքն ու իր կնիկը :

Անգամ մը ձկնորսը սիրուն ձուկ մը կը բռնէ , կու տայ իր շալակտարին , որ պահէ ու ինքը նորէն կը մտնէ ջուրը :



Շալակտարը գետափը նստած կը նայի, կը նայի սիրուն ձկանը ու կը մտմտայ .

— Տէր Աստուած , կ'ըսէ , աս ալ , որ մեզի նման շունչ կենդանի է , դուն ըսէ , աս ալ մեզի նման ծնող ունի , ընկեր ունի , աշխարհքէն բան կը հասկընայ , ուրախութիւն կ'ըզգայ , ցաւ կ'ըզգայ , թէ՞ ոչ . . .

Ճիշտ այս բանը մտածելու ժամանակը , ձուկը լեզու կ'առնէ ու կ'ըսէ .

— Լսէ , մարդ աղքատ : Ընկերներու հետ կը խաղայի ես գետի ալիքներուն մէջ , ուրախութենէս մոռցեր էի ինքրդինքս ու անզուշ ինկայ ձկնորսին ուռկանը : Հիմա ո՞վ գիտէ՝ ծնողներս ինձի կը վնասեն ու կու լան , հիմա ընկերներս տխրած են : Ես ալ , կը տեսնես , ինչպէս կը տանջուիմ , շունչս կը կարուի ջրէն դուրս : Կ'ուզէի նորէն երթամ , ապրիմ ու խաղամ անոնց հետ այն պաղ ու պարզ ջրերուն մէջ : Այնպէս կուզէի . . . : Եկուր , մեղքըցիր , ազատէ ինձի , բաց թող , բաց թող՝ երթամ . . .

Այսպէս կը խօսէր ան ցած , շատ ցած ձայնով մը , իր ցամքած բերանը բաց ու խուփ ընելով :

Չարմացաւ աղքատ շալակտարը , մեղքցաւ ու ձուկը բռնեց նետեց գետը :

— Գնա , սիրուն ձկնիկ , թող չի լան ծնողներդ , թող չը տխրին ընկերներդ : Գնա ապրէ ու խաղա անոնց հետ :

Իսկ ձկնորսը սաստիկ բարկացաւ շալակտարին վրայ .

— Ծօ տխմար , կ'ըսէր , ես հոս ջրին մէջ թրջուիմ ու ձուկ բռնեմ , որ դուն իմ աշխատանքս առնես ու նորէն ջուրը նետես . . . : Դէ , լգնա , կորսուէ , ալ աչքիս չերևաս . քեզի պէս շալակտար պէտքը չէ ինձի : Գնա՛ անօթի մեռիր : Խլեց ձեռքի կողովը ու ճամբու դրաւ :

Ո՞վ է իրաւացի , ձկնորսը թէ՞ շալակտարը :

Իսկապէս ձուկն էր շալակտարին պատասխանողը , թէ ո՞վ :

Ա Ռ Ա Մ

Լաւութիւն ըրէ  
ու ջուրը նետէ ,  
ձուկը չիմանայ ,  
Աստուած կ'իմանայ :

## 18. ՊՕՂՈՍ — ՊԵՏՐՈՍ

### 1.

Շատոնց, երբ մօտ էր երկրին երկինքը,  
ու դեռ կը լսեր մարդկանց Տէրն-ինքը,  
այդ լաւ օրերուն երկու մանուկներ  
ու մէկ չար, անսիրտ խորթ մայր կան եղեր :  
— Դուրս կորէք, գացէք՝ աշխատանք ըրէք,  
աշխատանք ըրէք ու եկէք կերէք .  
Թ՛նչ էք վար ինկեր անգործ, անպիտան,  
հառած տղաք էք հինգ-վեց տարեկան . . .

Այսպէս խորթ մայրը բարկացաւ մէկէն,  
ճիպոտներ տուաւ, զրկեց՝ հորթ պահեն :  
Անհանգիստ հորթեր, ամառուան տաք օր,  
հորթերը փախան, ինկան սար ու ձոր :  
Անոնց ետեէն՝ լալով, հեալով,  
փոքրիկ որբերը քարէ քար գալով  
ասդին կը վազեն անտառին մէջէն  
անդին կը վազեն, իրար կը կանչեն .

- Պօղոս, գտա՛ր : — Չէ՛ք :
- Պետրոս, գտա՛ր : — Չէ՛ք :
- Վայ, վայ, վո՛ւյ, վո՛ւյ :
- Վայ, վայ, վո՛ւյ, վո՛ւյ :

### 2.

Երբ շատ յոգնեցան, շատ փնտուեցին,  
Եկան խորթ մօրը լալով պատմեցին .  
— Մարիկ, ա՛ մարիկ, կորան հորթերը :  
— Վայ գետինն անցնիք, վայ ես ձեր խերը . . .

Թող դուք կորչէիք հորթերուն տեղը .  
արջ մը պատահէր, ուրիշ գազան, գայլ,  
որ չը տեսնէի երեսնիդ մէջ մ՛ալ :  
Հայտէ, շուտ գացէք, առջևէս կորէք,  
մինչև հորթերը չը գտնէք, բերէք  
չերեա՛ք աչքիս, այ աչքիս փշեր,  
թէ չէ կ'ըսպանեմ ձեզի այս գիշեր :

Ու ճիպոտները նորէն ձեռքերնուն,  
յոգնած, անօթի, արցունքն աչքերնուն,  
փոքրիկ որբերը անտառին մէջէն  
գիշերուան կէսին, կուլան, կը կանչեն .

- Պօղոս, գտա՛ր : — Չէ՛ք :
- Պետրոս, գտա՛ր : — Չէ՛ք :
- Վայ, վայ, վո՛ւյ, վո՛ւյ :
- Վայ, վայ, վո՛ւյ, վո՛ւյ :

### 3.

Անտէր հորթերը չը կան ու չը կան :  
Ճարերնին կտրած, խեղճերը եկան  
լալով չոքեցին .

« Տէր Ասուած ; ըսին,  
Թ՛նչ կ'ըլլայ՝ գթաս,  
գոնէ թևեր տաս,  
թևեր տաս՝ թռչինք,  
թռչինք ու կորչինք,  
որ ալ չերևանք աչքին մեր խորթ մօր,  
կտրած հորթերը գտնենք մինչև որ . . . » :

Աս ըսին-չըսին անմեղ բերանով,  
Աստուած որոտաց իր գլթոտ ձայնով .

— Ահա՛ ձեզի թի , սիրուն մանուկներ ,  
եղէք ու թռէ՛ք , դարձէք թռչուններ ,  
որ ալ չերևաք աչքին ձեր խորթ մօր ,  
կորած հորթերը գտնէք մինչև որ :  
Գիշերը եղէք ծառերու ճիւղին ,  
ծեղն ու ծղօար ըրէք անկողին ,  
ձեր հացն ալ կերէք իմ լի սեղանէս ,  
երբ հալածուած էք ձեր տունէն այսպէս » :

4.

Այսպէս վերերէն , որ կանչեց Աստուած ,  
փոքրիկ որբերը փոխուեցան յանկարծ  
ու առին թևեր ,  
դարձան թռչուններ ,  
ու թևեր առած ,  
թռչուններ դարձած ,  
դեռ մինչև այսօր  
ինկած սար ու ձոր  
կու լան , կը մնջեն ,  
իրար կը կանչեն .

- Պօղոս , գտար : — Չէ՛ք :
- Պետրոս , գտար : — Չէ՛ք :
- Վնյ , վնյ , վնլ , վնլ :
- Վնյ , վնյ , վնլ , վնլ :

Գիտե՛ս ուրիշ բոչուն մըն ալ , որուն հանած ձայնը մարդկային բառի մը  
կամ անունի մը նման հնչէ , այս Պօղոս-Պետրոսին նման :  
Այդ բոչունին վրան ալ շինուած պատմութիւն մը լսած ես , աւանդու-  
թիւն մը գիտե՛ս :

Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Տրեխը դրեր եմ ջուրը .  
կը թրջի՛ թող թրջի ,  
չի՛ թրջիր՝ թող չի՛ թրջի :

## 19. Հ Ա Մ Լ Ի Կ Ի Ա Ղ Օ Յ Բ Ը

Իրիկուն է : Համիկը կը պատրաստուէր պառկելու ,  
մայրիկը օգնեց , հագուստները հանեց ու ըսաւ .

— Դէ , աղօթքդ ըրէ :

Երեխան չօքեց իր ճերմակ անկողնին մէջ , ըսաւ « Հայր  
մերը » ու խոշոր պայծառ աչքերը վեր ուղղելով՝ խնդրեց .

— Աստուած , դուն պահէ հայրիկս , մայրիկս , Նու-  
նիկը , Աշխէնը :

— Ալ ուրի՛շ ով . — հարցուց մայրը ժպտելով :

— Պապիկս , մամիկս , հօրեղբայր վահանը , Լևոնը ,  
Վիգէնը , Կուտիկը . . .

Լևոնն ու Վիգէնը իր ընկերներն էին , իսկ Կուտիկը իրենց  
բակի շունն էր :

Եւ աղօթքը վերջացած համարելով՝ ուրախ-ուրախ մտաւ  
վերմակին տակը :

— Ախ , դուն անպիտան , Կուտիկն ալ մեր շարքը դրի՛ր . —  
խնդաց մայրը տղուն գլուխը համբուրելով :

— Դ՛նչ կայ որ . կարելի չէ : Դէ , լաւ , Կուտիկը թող  
մնայ , — աւելցուց իսկոյն . — թող , Աստուած , Կուտիկը  
թող . . .

Մայրը ծիծաղելով նորէն գրկեց , նորէն պինդ-պինդ համ-  
բուրեց ու ելաւ դուրս :

Իսկ երեխան սկսաւ մտածել՝ « Ինչո՞ւ համար Աստուած  
պիտի չը պահէ Կուտիկը , ինչո՞ւ թողնէ » :


Մտածեց , մտածեց , գլուխը բարձրացուց քիչ մը անկող-  
նին մէջէն ու շնչեց սենեակի լուսթեան մէջ .

— Չէ , Աստուած , չէ , Կուտիկն ալ պահէ , բայց մայրի-  
կին չըսես :

Ու նորէն մտաւ վերմակի տակ :

Ինչո՞ւ ըսաւ՝ « մայրիկին չըսես » :

Համիկը ինչո՞ւ կ'ուզէր , որ Աստուած Կուտիկն ալ պահէ :



## 20. ԿԱՅԻՆ ԱՂԲԱՐԸ

Մարդ մը գնաց հեռու երկիր աշխատանքի : Հասաւ գիւղ մը : Տեսաւ՝ այս գիւղի մարդիկը փայտը կը կտորեն ձեռքով :

— Աղբար, — ըսաւ, — ինչո՞ւ փայտը ձեռքով կը կտորէք . միթէ կացին չունի՞ք :

— Կացինն ի՞նչ բան է . — հարցուցին գիւղացիք :

Մարդը հանեց գօտիէն իր կացինը, փայտը ջարդեց, մանրեց ու դիպեց մէկ կողմ : Գիւղացիք աս որ տեսան վագեցին գիւղամէջ, ձայն տուին իրարու .

— Էյ, եկէք, տեսէք՝ կացին աղբարը ինչ ըրաւ :

Գիւղացիք հաւաքուեցան կացինի տիրոջ գլխուն, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տուին ու կացինը ձեռքէն առին :

Կացինը առին, որ հերթով կտորեն իրենց փայտը :

Առաջին օրը տարաւ գիւղի տանուտէրը : Կացինը վրայ բերաւ թէ չէ՝ ոտը կտրեց : Գոռալով ինկաւ գիւղամէջ .

— Այ, եկէք, եկէք, կացին աղբարը կատղել է, ոտքս խածաւ :

Գիւղացիք եկան, հաւաքուեցան, մէյ-մէկ փայտ առին ու սկսան ծեծել կացինը : Ծեծեցին, ծեծեցին, տեսան՝ բան չեղաւ, փայտերը կիտեցին, կացինը զրին վրան ու կրակեցին :

Բոցը բարձրացաւ, չորս կողմը բռնեց : Երբ կրակն իջաւ, խառնեցին, տեսան՝ կացինը կարմրեր է : Վախցան ու գոռացին .

— Վայ, տղաք, կացին աղբարը բարկացեր է, տեսէք՝ ինչպէս է կարմրեր . հիմա-հիմա մեր գլխուն փորձանք մը պիտի բերէ : Ինչ ընենք :

Քիչ մը միտք ըրին ու վճռեցին տանին նետեն բանդը, որ մարդու վնաս չը տայ :

Փայտերուն ծայրովը տարին նետեցին տանուտէրին մարագը : Մարագը լեցուն դարման էր . նետեցին թէ չէ՝ կրակն առաւ, բոցը երկինք բարձրացաւ :

Գիւղացիք սարսափած վագեցին տիրոջը ետեւէն, թէ՛ «Եկ՛ւր, Աստու սիրուն, կացին աղբօրը խօսք հասկըցուր» :

Փայտ կտրելու ուրիշ ի՞նչ գործիք գիտես : Ինչե՞ շինուած են այդ գործիքներ . ինչո՞ւ :

Մարդիկ մի՞տս են ունեցեր այդ գործիքներ : Մարդիկ ո՞ւր տեղե՞ն են գտեր այդ գործիքներ :

## 21. ՔԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԱԳԸ

Քամին վայեց արագ-արագ, կեցաւ կանչեց . «Մարագ, մարագ, գիտես՝ թէ ինչ ուժի տէր եմ, դու ող լայն բաց, դարման բերեմ» :

Մարագը թէ՛ «Գնա՛ բանիդ, ես կարօտ չեմ քու դարմանիդ . մէկ բան մըն է իմ խնդրածս՝ դուն մի տանիր ունեցածս» :

Շատ ժամանակ չէ, որ կտորուեր է Հոփփսիմէի ոտքը :  
Հայրը շատ ասդին-անդին ինկաւ, շատ բժիշկներու դիմեց,  
բայց ոչինչ չօգնեց : Աղջկան ոտքը կտրեցին :

Օր մը հայրը նստե՛ր՝ գիր կը գրէր սեղանին առջևը. Հոփփ-  
սիմէն փայտէ ոտքը թրխթրխկացնելով՝ մօտեցաւ անոր :

— Այ հերիք չէ՞, հայրիկ. ինչո՞ւ այդքան կը նստիս, կը  
գրես, հա՛ կը գրես :

— Հապա ի՞նչ ընեմ, աղջիկս. չէ՞ որ պէտք է գրամ շահիմ :

— Ինչո՞ւ պէտք է գրամը, հայրիկ : Պատիկ կտոր մը ար-  
ծաթ է կամ ոսկի, աւելի ի՞նչ :

— Բայց ինչ որ ուզենաս՝ կրնաս առնել այդ պատիկ  
կտոր մը արծաթովը ու ոսկիովը. — ըսաւ հայրը : — Այ,  
քեզի համար խաղալիք, շաքարեղէն, սիրուն հագուստներ,  
զլխարկ, կօշիկ, ինչ որ սիրտդ ուզենայ :

Հոփփսիմէն աչքերը յառեց կէտի մը, մտածեց, մտածեց  
ու յանկարծ ըսաւ :

— Ինչ որ սիրտս ուզենայ, հայրիկ :

— Այո՛, աղջիկս, իհարկէ :

— Որ այդպէս է, սոք մը առ ինծի համար, հայրիկ,  
բայց իսկական ոտք մը : Այնպէս վազել կ'ուզեմ երկու ոտ-  
քով, թռչկոտիմ, խաղամ : Հա՛, հայրիկ, իսկական ոտք մը :

Հայրը ոչինչ չը պատասխանեց, գրկեց աղջիկը, սեղմեց  
կրծքին ու սկսաւ համբուրել :

Հոփփսիմէն զգաց, թէ ինչպէ՛ս ամուր կը պարնէր հայ-  
րիկի սիրտը ու նայեցաւ անոր աչքերուն :

Հայրիկի աչքերուն մէջ արցունք կա՛ր :

Ինչո՞ւ արցունք կար հայրիկի աչքերուն :

Երբ որամ չը գործածենք՝ մեզի պէ՛տք եղած բաներ ինչպէ՛ս պիտի  
ձեռք բերենք :



22. ԱՂՈՒԷՍԸ ԲԱԺԱՆԱՐԱՐ

Երկու ագուաւ կտոր մը պանիր էին գտել :  
Կ'ուզէին բաժնեն իրենց մէջը : Մէկը կ'ըսէր՝ Ես  
բաժնեմ, միւսը թէ՛ ես : Ու կը կուէին ծառին  
վրայ :

Աղուէս մը տեսաւ, եկաւ, կեցաւ ծառին  
տակը .

— Ինչո՞ւ կը կուիք, — ըսաւ, — պանիրը  
նետեցէք վար, այնպէս հաւասար բաժնեմ, որ  
ոչ-մէկունդ ոչ աւելի ըլլայ, ոչ պակաս :

Վէճը դադրեցաւ. ագուաները պանիրին  
կտորը նետեցին վար :

Աղուէսը առաւ, երկու կտոր  
ըրաւ, դրաւ իր երկու թաթերուն,  
ծանր ու թեթեւ ըրաւ, կշռեց, որ ոչ-  
մէկունը աւելի կամ պակաս չըլլայ :

— Այո մէկը քիչիկ մը ծանր է. —  
ըսաւ ու խածաւ քովէն, որ հաւա-  
սարցնէ :

Դարձեալ կշռեց թաթերուն վրայ.  
հիմա ալ միւսն էր ծանր. պատառ

մըն ալ հոնկէ խածաւ, որ հաւասարցնէ :

Եւ այսպէս խածնելով-խածնելով բոլորը կերաւ,  
հաւասարցուց ու սուսիկ-փուսիկ գնաց իր բանին :

Ագուաները մնացին աչքերնին պաղած :

Ագուաները ուրիշ՞ գտել էին պանիրը :

1



Ժամանակով կատուն  
ճոն էր,  
շունն ալ գլխուն  
գզակ չունէր,  
բայց ուկէ ուր  
ճանկեր էր ան,  
ալ ո՞վ գիտէ,  
մորթ մը գառան:  
Եկաւ օր մը,  
ձմեռնամուտին,  
գտած մորթը  
բերաւ կատուն.  
— Բարի յաջողովմ,  
վարպետ Փիսօ.

գլուխըս պանդ . ի սէր Աստծու,  
ա՛ն այս մորթը, ինձի համար  
գզակ կարէ գլխուս յարմար.  
վարձքիդ համար դուն հոգ չընես,  
միայն թէ շատ շուշացնես:  
— Աչքիս վրայ, Քուչի քաւոր,  
գզակ մըն է, մուշտակ չէ որ.  
քու թանկագին խաթեր համար,  
ուրբաթ օրը հրամէ՛ տար:  
Իսկ դրամը, է, ամօթ է,  
մեր մէջ խօսելն աւելորդ է,  
ի՞նչ մեծ բան է որ, ծրհնըւած,  
միայն, միայն, մէկ գզակի վարձ:

2

Աստուն կանուխ ուրբաթ օրը,  
գլուխը բաց մեր քաւորը  
ծանրը, ծանրը, փողոցն անցաւ,  
կատուի շեմքին տնկուեցաւ:  
— Վարպետն ո՞ւր է. գզակս ո՞ւր է:  
— Կեցի՛ր, կու գայ՝ ուրտեղ որ է:  
Կատուն՝ հազած իր մուշտակը՝  
եկաւ, տեսաւ, բեխին տակը  
ինքնիրենը քիչ մը մըմըմաց,  
յաճախորդին վրայ թնդաց.  
— Տուրա՛ր տարա՛ւ, վա՛ն, տնաչէ՛ն.  
չես ալ թողներ, որ շունչ քաշեն.  
դիւրին է, ի՞նչ . այ, ես նոր եմ  
ցրրցամ տուեր, որ դեռ կարեմ:  
— Դէ, ծրհնըւած, այդպէ՛ս ըսէ,  
բարկանալը՞դ ալ ինչիս է.  
Ժամանակին հասցնէ՛ր ու տնւր,

շատ-շատ ըսէ՛՜ վա՛ղը եկուր:  
Հա՛մ խօսք կու տաս, հա՛մ չես կարեր  
հա՛մ ալ վրաս կը պոռաս դեռ,  
հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ  
քանի՞ անգամ երթամ ու գամ...  
Ըսաւ Քուչին ու սրտնեղած՝  
վերադարձաւ գլուխը բաց:

3


Եկաւ նորէն. դարձեալ չը կար.  
այս անգամը դպան իրար.



ա՛լ հօր ու մօր  
 ա՛լ հին ու նոր  
 ալ ի՛նչ խօսքեր , ի՛նչ վայնասուն ,  
 ալ գո՛ղ փիսօ , ալ սատկած շուն ...  
 Գործը հասաւ դատաւորին ,  
 մինչև շունը տարին , բերին ,  
 բանը բանէն արդէն անցաւ ,  
 վարպետ կատուն սնանկացաւ ,  
 գլուխն առաւ ու մէկ գիշեր ,  
 հայտէ , կորաւ . այդ կորչիցն էր ...

4

Այն օրերնէ մինչ այս օրն ալ  
 շունն այդ բանը կրնայ մոռնալ .  
 ուրտեղ կատուին որ պատահի ,  
 իսկոյն վրան պիտի նետուի ,  
 վրան նետուի , վրան հաշէ  
 ու իր մորթը ետ պահանջէ .  
 իսկ սևերես կատուն յանկարծ  
 ետ կը դառնայ ու բարկացած  
 Ֆր՛սս մը կ'ընէ , իբր թէ նոր եմ  
 ցլըրցամ տուեր , որ դեռ կարեմ :



Ի՛նչ , ընաւ դպրոց չէ՞ք խաղցեր դուք : Ո՛հ , հրաշալի  
 խաղ է : Ա՛յ , սկսինք՝ կը տեսնէք :

Բայց նախ պէտք է դասարան մը : Ըսենք՝ հոս դասա-  
 րանը ըլլայ , այս երկու պատուհանին մէջտեղը : Դէ , նստե-  
 ցէ՞ք , մանչերը ա՛յս կողմը , իսկ դ՛ուք , աղջիկներ , անցէ՞ք  
 այն կողմը :

Այդպէ՛ս : Հիմա պէտք է վարժուհի մը : Ո՞վ ըլլայ վար-  
 ժուհի : Ե՞ս : Է՛ս , ըլլա՛մ ես : Օխայ , ի՛նչ հիանալի բան է  
 վարժուհի ըլլալը . ամեն բան ինքդ հրամայես , ընես՝ ինչ որ  
 սիրտդ ուզենայ ...

Դէ , պղտիկներս , լուսթիւն : Ձեռքերնիդ սեղանին վրայ .  
 գիտէ՞ք , որ ես անկարգութիւն-չեմ սիրեր : Մռաջ՝ կարդա՛նք :

Դուն , Աշիսէ՛ն , դասդ բաց , տեսնեմ : Ո՛րն է : « Զրհմըր » :  
 Հը՞ . լա՛ւ , կարդա՛ : Այդպէ՛ս , ճիշտ է : Գէշ չես կարդար , Աշ-  
 իսէն , միայն բառերուն ծայրերը քիչ մը կ'ուտես , առտուն  
 նախաճաշիկ չէ՞ս ըրեր , ինչ է :

Շարունակէ՛ , Մարիա՛մ : Բայց քիչ մը բարձր : Քիչ մըն  
 ալ : Քիչ մըն ալ : Բերանդ բաց , մի՛ վախնար՝ ճանճ չի  
 մտներ :

Դուն , Աշոտ , մնացած կտորն ալ դո՛ւն կարդա : Ինչպէ՛ս .  
 չես սորված ... : Հապա դուն չէ՞ս ամընար : Ամօթ քեզի ,  
 Աշոտ . այսպէս ալ ծոյլ : Դասերէն ետքը կը նստիս , մինչև  
 ջրի պէս չը կարդաս՝ տուն չես երթար :

Դէ , տղա՛քս , հիմա հանեցէ՞ք տետրակները , միայն հան-  
 գիստ , առանց աղմուկի : Յակո՛բ , շո՛ւտ , ելի՛ր անկիւնը , ան-  
 պիտան : Քեզի քանի՞ անգամ ըսեմ , որ դասի ատեն չը խօսիս ,  
 անկա՛րգ տղայ :

Գրեցէ՞ք վերնագիրը՝ « Կովն ու գորտը » : Արաքսի՛ , մէջքդ  
 շիտա՛կ : Վայ , վայ , վայ , մի ինչ սարսափելի բան է , Հեղինէ՛ .  
 վը հնչիւնէն առաջ կը գրես կոր Օ . ատիկա դուն ուրտեղ ես

տեսեր : Սրբագրէ՛ , սրբագրէ՛ անմիջապէս , մարդ չը տեսնէ ,  
ամօթ է :

Աղէ՛կ , հերի՛ք է , յոգնեցաք : Թողէ՛ք , քիչ մըն ալ եր-  
գենք : Ետ նստեցէք . ուշադրութիւն . նայեցէ՛ք մատներուս ,  
որ միասին ելնէք ու իջնէք : Սկսինք . մէկ , երկու , մէկ . մէկ ,  
երկու , երեք , երեք , երկու , մէկ . մէկ , երկու . . . միասին ,  
միասին : Զաքար , դուն միշտ ետ կը մնաս , առ ի՞նչ բան է :  
Իսկ դո՛ւն , Հայկանո՛ւշ , երեքը այնպէս կը քաշես , կ'երկըն-  
ցընես , կարծես բերնիդ ծամօնը ըլլայ :


Է՛ , ապրի՛ք , աղէկ է . այսօր ձեր վարժունհին շատ զոհ է  
ձեզմէ : Ժողվեցէք գրեթէ ինչ ու գացէք տուն : Ձեզի կու տամ  
երկու ամիս արձակուրդ :

Ինչո՞ւ համար դպրոցները ամառը արձակուրդ կու տան :

Դուն ալ վարժապետ եղե՛ր ես : Փորձե՛ . միայն գրել-կարդալու տեղ քուս-  
բանութիւն պիտի սորվեցնես , իսկ երգի տեղ ալ՝ մարմնամարզ :

## 26. ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը եկաւ ,  
իջաւ սարին ,  
իջաւ սարի  
սուր կատարին ,  
եկաւ ըսաւ  
բարձրիկ սարին .



« Ի՛նչ ես , պապիկ ,  
անհող նստեր .  
ան որ անցաւ  
լաւ օրերդ էր .  
շուտով կու գան  
բուք ու բորան ,  
սաստիկ ցրտեր : »

Ըսաւ , գնաց :  
Սարը կամաց  
բերել տուաւ  
լայնատարած  
իր ճեփ-ճերմակ  
թաւ մուշտակը ,  
մտաւ տակը :

## 27. ՔԵՌԻ ՍԻՄՕՆԻ ՆԱՊԱՍՏԱԿԸ 1.

Քեռի Սիմօնը շատ լաւ մարդ է , լաւ ալ որսկան . ափսոս որ  
զինին քիչ մը շատ կը սիրէ :

Օր մը ան նապաստակ մըն էր բռներ ողջ-ողջ , անվնաս :  
Բերաւ իր աղային : Աղան ալ ուզեցաւ դրկէ քաղաք իր ըն-  
կերոջը նուէր : Ըսաւ Սիմօնին որ առնէ տանի :

Քեռի Սիմօնը այդ երկարականջ-կարճպոչանին դրաւ  
պարկի մը մէջ , պարկի բերանը ոլորեց , պարկը շալկեց ու  
ճամբայ ինկաւ : Ի՛նչ կ'երթայ . . . : Իսկ նապաստակը պարկին  
մէջ անշարժ կծիկ է դարձեր :

Ճամբու կէսին զինետուն մը կար : Քեռի Սիմօնը կ'ուզէր  
առանց նայելու արագ անցնի մօտէն . տասը քայլի մը շափ  
ալ արդէն անցեր էր , բայց չը համբերեց ու ետ նայեցաւ :  
Խանութի սեմին ծանօթներ տեսաւ :

« Ամօթ է՛ որ բարի լոյս մըն ալ չըսեմ » մտածեց ու  
դարձաւ դէպի զինետուն :

Պարկը դուրսը դրեր է գետինը պատի տակ ու ինքը  
ներսը ծանօթներուն կենացը կը խմէ : Չը գիտէ խեղճը , թէ  
այդ ծանօթները զխուն ի՛նչ են բերելու :

2.

Խմեց , պարկը նորէն շալակը նետեց ու եղանակ մը  
կլկլացնելով առաջ անցաւ :

Միայն թէ այս անգամ նապաստակը շատ անհանգիստ  
էր պարկին միջ , վեր-վեր կը թռչէր : Վա՛հ , այս ինչպէս ալ  
սուր ախոաներ է ունեցեր . Քեռի Սիմօնի կանակը մէջէմէջ  
կարծես ասեղներով կը ծակէին :

— Է՛յ , խելօք կեցիր , շի՛ խնամի . տաքցար , հա՛ : Ա՛յ ,  
հիմա կը հասնինք , մուշտակդ կը հանեն , գէ՛ , այն ատեն գնա  
տկոր-տկոր ցատկուտէ :

Քեռի Սիմօնի քէֆը տեղն էր :  
Աս ալ անս աղայի ընկերոջ տունը :  
3

— Թնխի, թուխի : Բացէք դուռը, բացէք : Չեզի նապաստակ եմ բերեր. նապաստակ մըն եմ բերեր, որ . . . : Միայն շուտ, խեղճը շատ է տաքցեր :

Բոլոր տնեցիք վրայ թափեցան. և Քեռի Սիմօնը առօրփառօր նապաստակը հանեց պարկէն :

Ինչ տեսնեն աղէկ : Կատու :



Քեռի Սիմօնը ապշած կեցեր է՝ կատուի պոչէն բարձր բռնած :

— Այդ նապաստակը քեզի ըլլայ. — չարացաւ տանտէկինը :

Աղայի ընկերը ունքերը կիտեց այդ անհամ կատակէն. երեխաները սկսան խնդալ, իսկ տան շունը սկսաւ հաջել :

Քեռի Սիմօնը վերջապէս կատուն նետեց նորէն պարկը, գարկաւ շարակը ու, հայտէ, ետ նորէն գիւղ :

3.

Ճամբան ինքնիրենը կը մտմտար.

« Սա՛ ինչ բան էր, Քիռի Սիմօն : Չէ՞ որ նապաստակը բռնողը դուն էիր, պարկին մէջ զնույր դուն էիր : Աղայի ըրած բանն է ըլլալու, ուզեր է ինծի խայտառակէ » :

Ու կ'երթար Քեռի Սիմօնը առաջընէ աւելի արագ : Հասաւ նորէն գինետուն :

Մտնէ՞, թէ չը մտնէ : Չէ՛, ինչպէ՞ս կարելի է. պէտք է շուտով տուն հասնի, այսպէս ալ բան կ'ըլլայ, իր տարիքի մարդը խայտառակ ըրին ուրիշներու առջև : Չէ՛, չէ՛, չի մտնէր : Ու քսան քայլի մը չափ անցաւ անդին :

— Բայց այս այրուած սիրտս գոնէ չը գովցընեմ. — մտածեց յանկարծ, պարկը մէկ ուսէն նետեց միւսը և ուղղուեցաւ դէպի գինետուն :

Պարկը նորէն դրաւ դուրսը պատին տակ ու ինքը մէկերկու գաւաթ նորէն կոնծեց ծանօթներուն հետը :

Պարկը շարակին ահա Քեռին կը մտնէ գիւղը :

« Աըւոր նայէ՛, ինչպէ՞ս սուս է եղեր : Հիմա ալ չը ցատկըւտեմ պարկին մէջ : Գիտե՞ս, հա՛մ, թէ ինչ եմ բերելու գլխուդ : Սպասէ՛. անգամ մը աղան տեսնեմ դեռ : Սյապէս ալ խայտառակութիւն. Քեռի Սիմօնը ով, կատուն ով : »

— Թը՛խի, հա՛ թը՛խի. — ինչպէ՞ս կը գարնէ Քեռի Սիմօնը տան դուռը : — Բացէ՛ք, է՛, բացէ՛ք. ինծի պէս ալեւորը խաղկ ու խայտառակ ըրիք : Կատու, հա՛մ, կատու . . .

Տնեցիք բոլորը դուրս թափեցան :

— Ահա՛, աղա՛, ընկերդ քեզի ետ կը զրկէ քու նուէրդ : Կըսէ՛ « Աս դուն, աս ալ քու նապաստակդ » :

Քեռին ձեռքը կոխեց պարկը և, իրաւ, նապաստակը չը հանէ՛ պարկէն :

Քեռի Սիմօնը սառած, սարսափած կեցեր է՝ նապաստակի յոծրակէն, կատուի նման, բարձր բռնած : Իսկ աղան գարկացած կը նայի, թէ նապաստակը ինչո՞ւ է ետ բերեր :

— Թո՛ւ, սատանայի ձագ. — պոռաց յանկարծ Քեռի Սիմօնը : Նապաստակը ձեռքէն վար ինկաւ : Ինկաւ, ցատկեց ոտքի ու փախաւ : Տնեցիք կը պոռային, շները վազեցին ետեէն : Այնչ կը բռնես . . .

5.

Ան է ու ան, Քեռի Սիմօնը ալ նապաստակ չի որսար : Ան է ու ան, աղան ու իր ընկերը վէճի մէջ են իրարու հետ :

— Դուն ինչո՞ւ ես ինծի կատու զրկեր. այդպէս ալ անամ կատակ :

— Աստուանձ, երկի՛նք. նապաստակ էր, նապաստակ :



Ու կը հարցընեն Քեռի Սիմօնին .

— Այ, հալւոր, քու բռնածդ, քաղաք տարածդ նապաստակ չէ՞ր :

— Նապաստակ էր, աղա՛, դուն շատ ապրիս . իհարկ նապաստակ էր :

— Այ մա՛րդ, քու բերածդ կատու չէ՞ր, սև կատու :

— Կատու էր, աղա՛, իհարկէ՛, հապա կատու չէ՞ր :

Այսպէս մինչև այսօր ալ դեռ կը վիճեն :

Գուն գուցէ ասոնց կը բացատրես՝ քե ի՞նչպէս եղաւ, որ նապաստակը կատու դարձաւ ու կատուն ալ նորէն նապաստակ :


## 28. ԱՂԲԱՏ ԿԻՆՈ

Յուրտը փշեց . ձմեռ սաստիկ .  
սառ է կապեր ոտքի տակ ,  
ու ամեն մարդ կ'ըշտապէ տուն՝  
պատսպարուի յարկի տակ :

Ժամի դռան դողդըղալէն  
ծեր կին մըն է կրթընած ,  
իբ հազուստը ծուէն-ծուէն ,  
ոտքը բոբիկ , կուրծքը բաց :

Վախվիտելով կապտած ձեռքը  
կ'երկընցնէ անցորդին .

« Ողորմութի՛ւն ըրէք , պարոն ,  
անտուն , անտէր աղքատին » :



## 29. ԻՇՈՒԿԻ ԳԱՆԳԱՏՈ

1.

Այգեպանը էշ մը ունէր : Լաւ կը կերցնէր, լաւ կը խնամէր, բայց լաւ ալ կը բանեցնէր : Այս մէկը իշուկի սրտովը չէր : Գարնանը ամեն օր այգեպանը ծաղիկով ու կանաչով լեցուն կողովները կը բարձէր իշուկին ու կը քշէր քաղաք :

— Ի՛նչ լիմար են այս մարդիկը . — կը մտմտար իշուկը ճամբան . — ծաղիկն ալ ի՛նչ բան է, որ կը սիրեն : Ախ, մէջ մը ամառը գայ, ազատուինք այս անպիտան վարդերէն, շուշաններէն, յասմիկներէն, այս սպանախէն ու ծնեբեկէն, սիւսեխէն ու սինդրիկէն, այս բոխէն ու բողկէն . ու երթամ հանպիստ, քէֆիս արածիմ :

2.

Ահա և ամառը :

Բանջարանոցին մէջ արդէն հասեր է լուբիան ու բաղձանը, դգումն ու վարունկը, սեխն ու ձմերուկը, գազարն

ու բազուկը :

Էջը հագիւ տեղէն կը շարժուէր այդ ծանրութեան տակ ամառուան տօթին :

— Ախ, — կը տքար էջը քրտինքի մէջ կորած, — երբ է գալու աշունը, կանաչէն ալ ազատուինք, բանջարեղէնէ ալ ու հանգիստ քիչ մը շունչ քաշենք :

3.

Եկաւ աշունը :

Խաղողը հասաւ, տանձ ու խնձորի առատութենէն ծառերուն ճիւղերը կը կոտրատէին, նուոր կարմրեր էր, սերկեխը դեղներ, ալ դեղձ, ալ ընկոյզ, ո՞ր մէկը ըսեմ : Ծանր կթոցները կը բարձէին իշուկին ու կը քշէին քաղաք :

— Աս ինչ տանջանք է, աղբւր. — գլուխը կախած թառանչ կը քաշէր իշուկը : — Գոնէ շուտով ձմեռը գայ, գետինը սառ կապէ, այս անպէտք բոյսերը մէջտեղէն վերնան ու վերջապէս ինծի հանգիստ թողնեն ախոռս, ուտեմ ու պառկիմ :

4.

Հասաւ ձմեռը :


Մարտափելի ցուրտ էր : Այգեպանը կանուխ էջը կը քշէր անտառ, փայտ կը կտրէր, ցախ կը հաւաքէր, խոիւ կը ժողվէր, կը բարձէր իշուն կոնակը ու կը բերէր տուն :

— Ի՞նչ անիծուած եղանակ է. — մըսելով ու սայթաքելով կը գանգատէր իշուկը : — Ամեն ինչ քար է կտրեր, խոտ չը կայ, բան չը կայ, որ կրծես : Երանի՛ շուտով գարունը բացուէր :

Ի՞նչպէս պիտի գանգատէր արտաքին իշուկը, երբ նոյն խելի տերը ըլլար :

Ա ո ս

Էջը հարսնիք կանչեցին, ըսաւ՝  
կա՛մ շուրն է պակսեր, կա՛մ փայտը :



### 30. Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ Մ Ը Ա Մ Ե Ն Ո Ւ Ն

Իաշատու անտառ, գիւղի ճամբան  
ծածկուեր է թիզ մը ձիւնով .

այ չի ճարուիր ուտելու բան,  
ո՞վ էր տեսեր այս տեսակ սով :

Յորեն, գարի՛ ոչ մէկ հատիկ .

Աստծու սիրուն, բարի մարդիկ,

փշուր մը հաց ատէք հիմա,

թէ չէ մեռանք մենք սովամահ :

Կու գան շուտով օրեր գարնան,

ձեզի մենք շատ կ'երգենք գուարթ,

ու փոխարէն ձեր լաւութեան

ձեր պարտէզը, այգին ու արտ

մենք կը մաքրենք թրթուրներէն,

ճիւղներէն ու որդերէն .

փշուր մը հաց միայն հիմա,

թէ չէ մեռանք մենք սովամահ :

Սուսմը մը թռչուններու կողմէ

Ծիւթիկ ձնձղուկեան

Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Ծաի ճուտը ծառի ճիւղին,

ծաի ճուտի ճիւղը ծուռ :

### 31. ԱԾԽԱՐԱՐՆ ՈՒ ՊԱՐՈՆԸ

Արմենակն ու Գէորգը դասընկեր էին: Արմենակը հարուստ պարոնի մը տղան էր, իսկ Գէորգը ածխարարի մը որդին:

Օր մը վէճի ատեն Արմենակը բարկացաւ ու ընկերը անուանեց « աղբատի լակոտ »:

Գէորգը կարմրեցաւ, աչքերը արցունքով լեցան, բայց ոչինչ չը պատասխանեց: Իրիկունը գնաց սուն ու դառն կերպով պատմեց հօրը:

Յաջորդ օրը ածխարարը իր տղուն հետ եկաւ վարժարան:

Եկաւ ու ամբողջ դասարանին առջևը գանգատեցաւ ու սուցչին:

Այդ միջոցին գիպուածով ներս մտաւ և Արմենակի հայրը, հարուստ պարոնը:

— Այս բանտըրը եկեր է ձեր զաւակին վրայ դանդատելու. դիմեց ուսուցիչը անոր:

— Պատճառը. — հարցուց պարոնը:

— Պատճառը ան, որ ձեր տղան « աղբատի լակոտ » է անուաներ անոր որդին:

Պարոնը ունքերը հաւաքեց, կարմրեցաւ ու հարցուց իր տղուն.

— Իրան է, Արմենակ, ըսէր ես դուն այդ խօսքը:

Արմենակը գլուխը վար կախեց ու լուռ կեցեր էր:

— Արմենակը գլուխը վար կախեց ու լուռ կեցեր էր:



— Ներողութիւն խնդրէ:

Ածխարարը արգիլել ուզեց, բայց պարոնը ուշ չը դարձուց ու կրկնեց.

— Ներողութիւն խնդրէ ու կրկնէ իմ ետևէս: « Կը խնդրեմ, ներէ ինձի հօրդ դէմ ըսած յիմար խօսքիս համար: Իմ հայրս պատիւ կը համարէ անոր ձեռքը սեղմելը »:

Ածխարարը նորէն ուզեց ընդդիմանալ, բայց պարոնը արգիլեց և Արմենակը կամաց ու կակազելով կրկնեց հօրը ետևէն.

— Խնդրեմ . . . ներէ ինձի . . . հօրդ դէմ ըսած . . . յիմար խօսքիս համար: Իմ հայրս . . . պատիւ կը համարէ . . . անոր ձեռքը սեղմելը:

Այն ատեն պարոնը երկընցուց իր ձեռքը, որը ածխարարը ամուր մը սեղմեց:

— Խնդրեմ, այս երկուքը իրարու քով նստեցնէք. — ըսաւ պարոնը ուսուցչին:

Եւ ուսուցիչը Արմենակն ու Գէորգը իսկոյն փոխադրեց իրարու քով միևնոյն գրասեղանը:


Ինչո՞ւ համար Արմենակի ըսածը վատ խօսք էր:

Ինչո՞ւ համար անոր հայրը պատիւ կը համարէր ածխարարի ձեռքը սեղմելը:

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(4)

Պոչը ջուրը,  
գլուխը կրակը:



### 32. ՈՒՐ ԵՆ

— Ո՛ւր են գոյն-գոյն ծաղիկները :  
 — Սո՛ւս, պառկած են հողին տակ,  
 տաք ծածկուած ցուրտ ձմեռը  
 ձիւն-ծածկոցով սպիտակ :

Կու գայ գարնան արևը ետ  
 իր շողերով կենդանի,  
 ու ձմեռուան ցուրտերուն հետ  
 ձիւն-ծածկոցը կը տանի :

«Ելէ՛ք, կ'ըսէ, ձեր խոր քունէն »:  
 Անոնք իսկոյն կ'իմանան,  
 գլխիկները դուրս կը հանեն  
 ու աչուկնին կը բանան :

Ինչո՞ւ ձմեռը խոս ու ծաղիկ չըլլար :  
 Ի՞նչպէս է՝ որ ձմեռը խոս ու ծաղիկներ չեն ոչնչանար :

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(5)

Մարագ՝ մէջը լիքի ուրազ :

### 33. ՁՄԵՌԸ

1.

— Օ՛ֆ, ե՛րբ պիտի անցնի այս անպիտան ձմեռը . —  
 կ'ըսէին մարդիկ գոց սենեակներնուն մէջ :

— Օ՛ֆ, ե՛րբ պէտք է վերջանայ այս անիրաւ ձմեռը . —  
 կը գանգատէին կենդանիները նեղ որջերնուն մէջէն :

— Օ՛ֆ, ե՛րբ պէտք է ազատուինք այս անտանելի ձմեռուան ձեռքէն . — կը տրանջային թռչուններէն մնացողները մերկ ճիւղերուն վրայ :

Ու սաստիկ բարկացաւ ձմեռը : Վճռեց մէկ անգամէն ոչնչացնէ բոլորը :

Ձայն տուաւ պաղ-պաղ հովերուն, կանչեց սառնամանիքները, հաւաքեց իր բոլոր զօրութիւնը ու յարձակեցաւ աշխարհի վրայ :

Խոր ձիւնով բռնեց բոլոր ճամբաները, կապեց գետերը, կախեց սառոյցէ սուրբ տանիքներէն ու ծառերէն, սառոյցէ վարագոյրներ քաշեց լուսամուտներուն, խցկեց որջերուն բերանները ու դանակի պէս կտրող սուր քամին արձակեց դաշտերուն, սարերուն ու ձորերուն վրայ :

2.

Բայց իզո՞ւր :

Թէև թռչուններէն քանի մը հատը ցրտահար եղան, բայց մնացածները կծկուեցան տներու ծածկերուն տակ, ծխնեւոյզներուն մօտ, տաք ճեղքերուն մէջ ու չը մեռան :

Վայրի կենդանիները հաստ մուշտակները կոնակնին շատ բանի տեղ չը դրին ձմեռուան բարկութիւնը ու դաշտ կ'եղնէին որս ընելու :

Մարդիկ ալ աւելի պնդացուցին պատուհաններն ու դռները, փայտը անդադար կը ճարճատէր վառարանին մէջ, հագան իրենց ամենէն տաք հագուստները ու գացին իրենց գործին :

Չմեռը տեսաւ այս բոլորը ու յուսահատեցաւ :

Յուրաքանչյուր օր է օր թուլցաւ, արևը քանի գնաց աւելի տաք-  
ցաւ, լսուեցաւ ջրերու կլկոցը, թռչունները աւելի ուրախ  
երգեցին, զաշտերը քիչ-քիչ կանաչ հագան ու մարդիկ բացին  
դուռ ու պատուհան :

Գարուն էր :

Ինչպես կը պասսապուրուին ձմեռուան ցարեհն նիհուհ, նամնչ, մեղուն,  
օձը, կրիան, գոթը, ձուկը :

Եւ երկամեր ձմեռը ինչո՞վ ու ինչպես կը գուարեանան :

### 34. ՈՐՍԻ

Հօրս կնուներին, մօրս ծնունդին գացինք մենք որսի,  
մենք երեք հոգի, թրով ու սրով, հրացաններով, գացինք մենք  
որսի : Հատին էր, Հուտին էր, Չատին էր, Մատին էր,  
հայրս էր, ես էի, գացինք մենք որսի :

Գացինք, գացինք շատ թէ քիչ, տեսանք երեք լիճ, եր-  
կուքը ցամաք, մէկուն մէջն ալ ջուր չը կայ :

Մէյ մըն ալ, ահա, նայինք որ այդ անջուր լճին մէջ լող  
կու տան երեք հատ հաւ, երկուքը սատկած, մէկն ալ կեն-  
դանի չէ :

— Հատի, հայտէ գարկ :

Թէ՛ Հրացան չունիւ՛ :

— Հուտի, հայտէ դարկ :

Թէ՛ Ես ալ չունիմ :

— Դուն, Չատի . . . Մատի . . .

Թէ՛ Մենք ալ չունինք :

— Հապա ի՞նչ ընենք :

Եղբորս ձեռքը կարճ ու երկար, հաստ ու բարակ փայտ  
մը կար, դրաւ երեսին, նշան առաւ, մէյ մըն ալ, տրաք,  
որ կրակեց, հաւը փռուեցաւ այսպէս, ամեն մէկ թևը հինգ  
արշին ու կէս :

— Հատի, դանակդ :

Թէ՛ Դանակ չունիմ :

— Հուտի, դանակդ :

Թէ՛ Ես ալ չունիմ :

— Դուն, Չատի . . . Մատի . . .

Թէ՛ Մենք ալ չունինք :

— Հապա ի՞նչ ընենք :

Քեռիս միայն պզտիկ դանակ մը ունէր, ան ալ բերան  
չունէր : Քաշեցինք այդ անբերան դանակը, մորթեցինք հաւը,  
շարկեցինք ու ճամբայ ինկանք :

Գացինք, գացինք շատ թէ քիչ, մէյ մըն ալ տեսանք երեք  
գիւղ, երկուքի տեղն անգամ չի երևար, երրորդի մէջն ալ ոչ  
տուն կայ, ոչ մարդ :

Մտանք այդ անշէն գիւղը, ասդին փնտռեցինք, անդին  
փնտռեցինք, դռան մը առջև տեսանք երեք հատ պառաւ,  
երկուքը մեռած, մէկուն մէջն ալ շունչ չը կայ :

— Տղաք, ըսինք, եկէք հաւով փխլաւ ուտենք :

Այդ անշունչ պառաւը գնաց ներսէն երեք բրինձ բերաւ  
ու երեք պղինձ . պղինձի երկուքը ծակ, մէկն ալ տակ չունի :

Չուրը լեցուցինք այդ անտակ պղինձը, մէջը նետեցինք  
հաւերն ու բրինձը, դրինք գետին, որ եփի :

Եփեցաւ, եփեցաւ, միսն ու բրինձը գացին, մնաց ջուրը :

Որսէն դարձած անօթի մարդիկ, վրայ ինկանք ու կե-  
րանք . ինչպէս կերանք, ոչ աչքերնիս բան տեսաւ, ոչ բե-  
րաննիս բան մտաւ :

Այս պատմութեան ո՞ր կտրուկն էն, որ կը խնդացնեն . եւ ինչո՞ւ :

Այս պատմութիւնը ինչպէ՞ս կը պատմես, որ խելի մօտիկ բան մը դառնայ :

### 35. ԿԱՅԻԼ ՄԸ ՄԵՂՐ

1.

Գիւղացի մը խանութ բացեր  
 իր գիւղին մէջ բան էր ծախէր :  
 Օրին մէկը մօտիկ գիւղէն ,  
 մահակն ուսին , շունը քովէն ,  
 հսկայ հովիւ մը ներս մտաւ :  
 — Բարե՛ , ըսաւ : Ա՛ , խանութպան ,  
 մեզր շունի՞ս . տան քիչ մը բան :  
 — Բարի եկար ,  
 հովիւ աղբար ,  
 մեզր ըլլայ փնտռածը ,  
 ամանն ո՛ւր է , բեր ամանըդ ,  
 ուր տեղէն որ ինքդ հաւնիս ,  
 կտրեմ ու տամ այս վայրկեանիս :

Այսպէս սիրով ,  
 անուշ բերնով  
 կը խօսէին ,  
 կը կշռէին ,  
 երբ որ յանկարծ  
 կաթ մը մեզր ծորեցաւ ցած :

2.

Տը՛գգ . անդիէն ճանճ մը եկաւ  
 ու կաթիլին վրայ ինկաւ :  
 Իսկ խանութի տիրոջ կատուն՝  
 աչքը ճանճին՝ անցաւ թաքուն  
 մօտով , լօտով ,  
 զարկաւ թաթով :  
 Բայց ճիշտ կատուի ցատկերուն հետ ,  
 հովիւի շունի իսկոյն կեթ




հաֆ մը ըրաւ ,  
 վրայ թռաւ ,  
 կատուն բռնեց ,  
 կոխեց տակը ,  
 խածաւ , խեղդեց ,  
 մէկդի նետեց :

3.

— Խեղդեց , խեղդեց , շան որդի շուն .  
 վայ իմ կատուս . հայ , սատկիս դուն—  
 կատրեցաւ մեր խանութպանը  
 ու ձեռքն ինկած առջի բանը  
 տուր թէ կու տաս շանը ճակտին ,  
 կատուին քովը դրաւ գետին :  
 — Վայ ապրուստս , առիւծ շունս ,  
 վայ աւրեցաւ տեղս , տունս .  
 տո՛ւնդ աւրի , այ խանութպան ,  
 անխիղճ , լիրբ , չար , անգութ գազան .  
 ինչպէ՞ս . դուն իմ շունս զարնե՞ս .  
 դէ , զարնելը , ա՛ն , հիմա տես . —  
 գոռաց մեր բիրդ աժտահակը ,  
 մեծագլուխ իր մահակը  
 որ չիջեցուն անոր դէմքին ,  
 խանութպանը փռեց շեմքին :

4.

«Սպաննեցին... հայ, օգնութիւն...»  
 ու թաղէ թաղ ու տունէ տուն  
 ձայն կու տային մէկը միւսին ,  
 ձայն կու տային , կը վազէին :



Վերի թաղէն , վարի թաղէն ,  
 ճամբաներէն , գործին տեղէն ,  
 ճիչով , լալով ,  
 ու վայ տալով ,  
 ալ հայր ու մայր ,  
 քոյր ու եղբայր ,  
 կին , երեխայ ,  
 ընկեր տղայ ,  
 զոքանչ , անեք ,  
 քաւոր , հարսներ  
 քեռի , փեսայ ,  
 ալ ինչ գիտնաս՝  
 թէ ով է սա ,  
 կու գան , կու գան  
 մարդուն վրան .

— Ծօ , կոպիտ արջ , ծօ , ամեհի .  
 այս տեսակ ալ բան պատահի .  
 դուն առուտուր եկար ընես ,  
 թէ իր շեմքին մարդ ըսպաննես ...

Հա՛ կ'ըսեն ու հա՛ կը զարնեն  
 աղցան կ'ընեն , կ'երկընցընեն  
 շան կուշտն իվեր : « Հայտէ , առէք ,  
 ձեր մեռելը եկէք տարէք » :

5 .

Ու հոնտեղէն բոթը ահա՛ ,  
 կ'երթայ մօտիկ գիւղը կ'իյնայ ,  
 թէ՛ « Մեռե՞ր էք ,  
 հասէք , եկէք ,  
 սպաննեցին  
 մեր գիւղացին : »

Շնաճանճի բոյնը ինչպէս ,  
 երբ որ կ'աւրես ու կը թողնես ,  
 այդ ճանճին պէս ,  
 ամբողջ գիւղը կ'երնէ ոտքի ,  
 ու գունդ ու գունդ դուրս կը նետուի ,  
 ամեն մէկը առած բան մը՝  
 որը ձեռքը հրացան մը ,  
 որը եղան , ցաքատ կամ սուր ,


որը թի , բահ , որը շամփուր ,  
 որը փայտով , կամ կացինով ,  
 որը ոտքով , որը ձիով ,  
 որն անգղակ , որը բոբիկ ,  
 հայ , կը վազեն գիւղը մօտիկ :


— Ծօ , այսպէս ալ անիրաւ գիւղ ,  
 ոչ խիղճ ունին , ոչ ահ-երկիւղ .  
 գացեր է մարդն առուտուրի ,  
 հաւաքուեր են տուեր սուրի :  
 Թո՛ւ ձեր գիւղին , սովորութքին ,  
 թո՛ւ ձեր պատուին , ձեր վարմունքին .

երթանք , երթանք ,  
 ջարդ ու փշուր  
 կրակի տանք ...

— Հայ , հո՛ւյ , առա՛ջ , ձեզի տեսնեմ ...

Ու դուրս եկան իրարու դէմ  
 կոտորածի  
 երկու գիւղերը դրացի :  
 Տուին , զարկին  
 սպաննեցին






ու ինչքան շատ արիւն տեսան  
այնքան աւել դարձան զազան ,  
Չարդեցին իրար ,  
Շնչեցին իրար ,  
կորան ու եղան  
գետնին հաւասար :

6.

Դուն մի ըսեր , որ իրարու  
սահմանակից մեր այս երկու  
գիւղերը հարկ եղեր կու տան  
ամեն մէկը զատ տէրութեան :  
Մէկ տէրութեան թագաւորը ,  
լսելուն պէս այս բոլորը ,  
լուր կը զրկէ ասդին-անդին  
իր հպատակ ժողովուրդին .  
«Յայտնի ըլլայ մեր տէրութեան  
գինւոր , բանւոր , ազնւական  
ամեն շարքին  
ու աշխարհքին ,  
որ անօրէն ու դաւաճան  
մեր դրացի ազգը դաժան ,  
երբ մենք նստած էինք սիրով ,  
մեր սահմանը մտաւ զօրով  
ու վատութեամբ քաշեց սուրի  
դաւակները մեր սիրելի :  
Եւ հակառակ մենք մեր կամքին ,  
պատուէր տուինք մեր բանակին ,  
թշնամիին մտնէ հողը ,  
մեր սուրբ , արդար հանէ ոխը . . . »

Իսկ անդին ալ միւս իշխանը  
գրեց զօրքին ճիշտ նոյն բանը :  
Մկտուեցաւ կռիւ անեղ .  
Թնդանօթներ եկան մէջտեղ :  
Կրակն ինկաւ շէն ու քաղաք ,  
արիւն , աւեր , ճիչ , աղաղակ ,  
ամեն կողմէ սարսափ ու բօթ ,  
ամեն կողմէ մեռելի հոտ . . .



Ամառ , ձմեռ այդպէս անցան ,  
ու մնացին դաշտերն անցան :  
Դեռ կռիւը չը դադարած ,  
սովը եկաւ համատարած ,  
սովը եկաւ , սովի հետ ցաւ ,  
ծաղկած երկիրն ամայացաւ . . .

Ինչո՞ւ շուր խեղդեց կասուն : Ինչո՞ւ խանութպանը սպաննեց շուր :  
Ինչո՞ւ հովիւր սպաննեց խանութպանը :  
Ի՞նչ տեսակ շուր էր հովիւն շուր , ի՞նչ տեսակ մարդ էր խանութպանը ,  
ի՞նչ տեսակ մարդ էր հովիւր :  
Խանութպանի՞ քե հովիւի գիւղացիներն են աւելի կոպիս ու վայրենի :  
Ո՞րն է այս բոլոր դժբաղդութիւններու իսկական պատճառը :

### 35. ԿԱՆԱԶ ԱՂԲԱՐ

էյ, կանաչ աղբար,  
էյ, ճանաչ աղբար,  
եկնուր շողերով,  
զուարթ շողերով.

բեր անուշահոտ  
ծիլ, ծաղիկ ու խոտ,  
յորդ, պղտոր վտակ,  
երկինք կապուտակ.

բեր ուրախութիւն,  
զառն ու ուլ խայտուն,  
խատուտիկ հաւքեր,  
զրբնկան երգեր.

եկնուր շողերով,  
զուարթ շողերով,  
էյ, կանաչ աղբար,  
էյ, ճանաչ աղբար:

Ինչո՞ւ կ'ըսենք գարնանը « կանաչ աղբար » :  
Չմեռուան ի՞նչ աղբար կ'ըսենք :

### 36. ՄՇՏԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴ

1.

Գարնան շողը դպաւ սարերու ձիւնին և ձիւնը կամա-  
ցուկ արտասուեց : Ձինջ կաթիլը ինկաւ գետին, գրկուեցաւ  
ուրիշ կաթիլներու հետ ու գլորուեցաւ վար :

Կը գլորուին կաթիլները ու կը փսփսան .

— Ճամբայ . . .

— Ասո՞նք ով են՝ կը վազեն . — մտածեց ճնծաղիկը,  
վեր հանեց գլուխը, տեսաւ պայծառ արևը և ուրախութենէն  
անուշ բուրում արձակեց :

2.

Կը սահին ձիւնի կաթիլները, կը սահին անոնց բազմա-  
թիւ թելերը, կը հանդպին աղբիւրի կաթիլներուն ու կը  
մրմնջեն .

— Դո՞ւք ուրիշ կու գաք, քուրի՛կներ :

— Սյնպէս նեղ էր, այնպէս մո՞ւթ էր մեր ճամբան . —  
կը պատասխանեն աղբիւրի կաթիլները . — գետնի տակ հազիւ  
հազ գտանք իրար ու դուրս վազեցինք ակէն : Ի՞նչ լոյս է  
հոս, ի՞նչ ազատ : Մեր ընկերները շատոնց է առաջ են անցեր,  
կ'ըշտապենք անոնց ետևէն :

— Մենք ալ կու գանք ձեզի հետ . — ըսին ձիւնի կաթիլները :  
Ու կայտառ առուակը կարկաչելով սուրաց վար :

— Աս ի՞նչ ազմուկ է . մի՞թէ գարուն է արդէն . — ար-  
թնցան բողբոջները ծառերու ձիւղերուն և մուշտակներնին  
հանել սկսան :

3.

Առուակը գրկուեցաւ առուակի հետ, ու խենթ գետա-  
կը փրփրելով վիժեց քարէ քար՝ տանելով հետը աւազ, խիճեր  
ու չորցած տերևներ :

Իր ընկերներուն հետ միասին կը թաւալէր մեր կաթիլը,  
կը ցատկուէր ու կը պոռար .

— Ճամբայ . . .

Ձաղագսպանը դուրս վազեց, շտապով կապեց նաւին  
դուռը, որ գետակը ջաղացին անիւը չը կտարէ :

Ճամբորդը զգնւշ մտեցաւ կամուրջին՝ մի՞ գուցէ ջուրը  
քանդած ըլլայ :

4.

Գետակը մէյ մըն ալ յանկարծ ինկաւ արտերը, քար ու  
աւազ կուտակեց հոս ու հոն և շուտով ալ դուրս եկաւ,  
միացաւ իր նման խենթերու հետ :

Գետը ուռեցաւ, վարարեցաւ : Կատղեր էր . կը գլտորէր  
ահագին բարերը, արմատախիլ կ'ընէր դարևոր ծառեր, կը  
փշրէր ափերը, կ'աւերէր տուններ, կը սրբէր այգիները :

Իր ընկերներուն հետ միասին կը գրդար և մեր կաթիլը .

— Ճամբայ . . .

Գիւղացին ու քաղաքացին յուսահատ իրար են անցեր :  
Մինչ գետը կ'ըշտապէ գէպի ծով :

Ուժեղ հովին տակ կը խորշումի ծովուն երեսը . ահագին ալիքները կ'օրօրուին , կը շառաչեն ու կը փրփրին :

Մեր կաթիլը հեծեր է . վիթխարի ալիքի մը ճիշտ կատարը , ու ինչպէս կը ոստոստէր , ինչպէս կը խայտար , թեթև ու կայտառ :

Յանկարծ զգաց , որ կարծես փրթաւ ալիքին վրայէն : Արևը այնպէս մեղմ կը շոյէր ու այնպէս անուշ վեր կը կանչէր : Կաթիլը թեթև-թեթև կը բարձրանայ վեր , կը թռչի դէպի կապոյտ երկինքը , դէպի պայծառ արևը :

Կը թռչի , կը մօտենայ իրմէ առաջ վեր ելած քուրիկներուն ու կը կրկնէ անոնց հետ բարակ ամպին մէջէն .

— Ճամբայ . . .

## 6.

Վերերը ամպը միացաւ ուրիշ ամպերու ու ծանր կախուեցաւ երկրնքէն :

Ու այդ սև-սև թուխպերուն մէջ , շատ շանցած , սարսափելի կռիւ ինկաւ . կը գոռգոռային , կը զարնէին , բոց ու կրակ կը նետէին իրարու :

Մեր կաթիլն ալ զրգուներ էր , կը նետուէր հոս ու հոն , կը դառնար , կը հրէր ու կը հրմշտէր և անդադար կը պոռար .

— Ճամբայ . . .

— Ճամբայ . — կ'որոտային բոլոր կաթիլները միաբերան : Եւ յանկարծ մեծ թափով կը թափին ցած , կը սլանան դէպի երկիր :

## 7.

Տեղաց անձրևը պապակած հողին վրայ :

Մեր կաթիլը ինկաւ արտի մը մէջ , նորածիլ հասկի մը ոտքը : Հասկը թրթուաց ու կանչեց .

— Բարով եկար , մշտական ճամբորդ . ինչպէս կարօտ էի քեզի :

Հասկը ինչո՞ւ եր այդպէս կարօտ մեր կաթիլին :

Կրնա՞ս քե՞ր քե ինչպէս պիտի շարունակուի կաթիլին ճամբորդութիւնը հասկի արմատին հանդիպելէն ետք :

Գարունը եկաւ ամպերով , ամպերը եկան անձրևով . անձրևը տանիմ արտին տամ , արտը ինծի ցորեն տայ , ցորենը տանիմ ջաղցին տամ , ջաղացը ինծի ալիւր տայ , ալիւրը տանիմ տաշտին տամ , տաշտը ինծի խմոր տայ , խմորը տանիմ թոնրին տամ , թոնիրը ինծի հաց տայ . հացը մեր մեծին , պզտիկին , Աստու ու օրհնանքն ամենքին :

Քանի՞ ձեռներ են աշխատեալու կերամ հացդ պատրաստելու համար :

## 38. ԱՌԻԻԾԻ ԵՐԱԶԸ

## 1.

Առիւծին կորիւնը փակուած էր վանդակին մէջ : Մոայլ կը նայէր երկաթէ ամուր ձողերուն ետեւէն : Կարօտով կը յիշէր իր հայրենի տաք անապատը , կը յիշէր՝ թէ ինչպէս գիշերները աստղերու լոյսով իր մօրը հետ կ'իյնային արագափաղ եղնիկներուն ետեւէն , թէ ինչպէս կը խաղար մօրը քովիկը , ուրախ , իր քոյր ու եղբայրներուն հետ , արմաւենիներուն տակը :

Անցան այդ բոլորը : Հիմա գազանանոցին մէջ բանտարկուած , տխուր կը նայէր հաստ ձողերուն ետեւէն :

Գիշեր էր : Շուրջը լուռ ու խաղաղ : Գազանանոցի բոլոր գերիները՝ վազրը , արջը , գայլը , կապիկները , ջայլամը , եղ-

Չերուները, ամենքն ալ իրենց վանդակներուն մէջ, յարդին վրայ տարածուած՝ կ'ըսպասէին լուսնալուն :

Վերջապէս առիւծի ձագը յոգնած՝ գլուխը դրաւ թաթերուն վրայ ու քնացաւ :

2.

Գեշերուան մէկ պահուն յանկարծ գազանանոցի դուռը լայն բացուեցաւ ու ներս մտաւ անոր մայրը : Ներս մտաւ հպարտ ու հզօր, կրակոտ աչքերը պտտցուց վանդակներուն վրայ ու տեսաւ . . .

Տեսաւ իր գաւակը : Աչքերը փայլատակեցին, մոնչեց, յարձակուեցաւ ու զօրեղ զարկով մը խորտակեց վանդակին ձողերը :


Կորիւնը երջանկութենէն ճշաց, վեր թռաւ ու նետուեցաւ, որ իյնայ մօրը գիրկը, դպաւ երկաթէ ձողերուն ու արթնցաւ :

Տեսաւ՝ երազի մէջ էր . . .

Գիշեր է : Շուրջը լուռ ու խաղաղ : Գազանանոցի գերիները՝ վագրը, արջը, գայլը, կապիկները, շայլամը, եղջերուները, ամենքն ալ իրենց վանդակներուն մէջ, յարդին վրայ տարածուած՝ կ'ըսպասէին լուսնալուն :

Կորիւնը ձիգ ու երկար կը մոնչէր գիշերուան լուսնալուն մէջ :

Ինչո՞ւ կը մոնչէր կորիւնը :



## 39. ՄԱՐՏԸ

Այս խենթ ամսին մարտ կ'ըսեն, հանգիստ չունինք երեսէն .

այսօր ուրախ, մեղմ օրիկ,  
վաղը աղմուկ, փոթորիկ .

առտուն կանուխ պայծառ օդ,  
ճաշին մութ է, անձրևոտ .

օր մը ինչ ցուրտ, օր մը տաք,  
հոս բաց, իսկ հոն ամպի տակ .

հոս կը խնդայ, հոն կու լայ,  
ասանկ ալ խենթ բան կ'ըլլայ :

## 40. ԿԱՐԾԵՍ

Գիւղացի մը իշուն թան բեռցած կ'երթար քաղաք : Ճամբան կը պատահի մարդ մը :

— Բարև՛, հաճի՛-աղբար, — կ'ըսէ մարդը, — կարծեմ դուն վերի գիւղէն ես :

— Այո՛ . — կը պատասխանէ գիւղացին :

— Կարծեմ քաղաք կ'երթաս . — կը շարունակէ մարդը :

— Այո՛ . — կը պատասխանէ գիւղացին :


— Կարծեմ թան է ձիուդ բեռցածը :

— Այո՛ . — կը պատասխանէ գիւղացին :

— Կարծեմ գաւաթ մը տաս պիտի ինծի, որ ծարաւս կոտրեմ :

— Ո՛չ . — կը պատասխանէ գիւղացին : — Ինչ կը կարծես՝ կարծէ, այդ մէկը մի՛ կարծեր :

Գիւղացին ինչո՞ւ մեծեց գաւաթ մը բանը :



## 41. ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԾԱՂԿԻՆ ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐԸ

1.

Գարնան պայծառ առտու մը, երբ արևը կը ծագէր շքեղ, երբ թռչունները կ'երգէին ուրախ ու հովը կը խաղար թփերուն հետ, անտառին մէջ բացուեցան թարմ ու անուշահոտ մանուշակները:

Ճերմակ ձնծաղիկները թփերուն տակէն ողջունեցին անոնց փթթիլը, դեղին գինեբրուկը ժպտեցաւ անդիէն, շուրջը սկսան թրթռալ գոյն-գոյն թիթեռնիկներն ու ժիր մեղունները:

— Ի՞նչ հրաշալի մանուշակներ են. — բացականչեց փոքրիկ աղջիկը: — կը քաղեմ, փունջ կը կապեմ ու կը դնեմ պատուհանս ծաղկամանիս մէջը:

— Է՛յ, աղջիկ, չը համարձակիս իմ ծաղիկներս քաղելու. — տղգաց մեղուն բարկացած: — Ատոնք ինձի համար են բացեր իրենց բաժակները ու հոն ինձի համար են քաղցր հիւթ ամբարներ, անուշ փոշի պատրաստեր:

2.

Մէջ ինկան և՛ թաւամազ մեղունները, և՛ թիթեռները, և՛ բզէզները: Ամեն մէկը կը պնդէր, թէ՛ իրն են այդ մանուշակները: Արևը լսեց, խնդաց ու ըսաւ.

— Յիմարներ, ինչի՞ վրայ կը վիճէք: Երկրիս երեսի՞ս ամեն ապրող բան ծներ է իմ լոյսէս ու ջերմութենէս: Չէ՞ք հասկընար՝ որ բոլոր ծաղիկներն ալ իմինս են:

Աղջիկը կեցեր էր մէջտեղ շուարած. կը լսէր ամենքն ալ ու չը գիտէր՝ որո՞ւն հաւտայ:

Վերջապէս դարձաւ մանուշակներուն.

— Դո՛ւք ըսէք ինձի, սիրուն մանուշակներ, դո՛ւք ըսէք, ինչո՞ւ համար կը ծաղկիք, ինչո՞ւ համար կը բացուին ձեր հոտաւէտ բաժակները, ինչո՞ւ համար կ'ապրիք:

Մանուշակները պատասխանեցին.

— Մենք կ'ապրինք ապրելու համար: Կը ծաղկինք ու սերմեր կը թողնենք, որ մեզմէ՛ ետքն ալ ծաղկին ու ապրին մեզի նման մանուշակներ:

Արևը իրաւունք ունի՞ ըսելու, թե՛ ամեն ապրող բան ծներ է իր լոյսէն ու ջերմութենէն:

## 42. ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,  
ես ծաղիկ եմ անուշ հոտով.

Թէև տունկս փոքրիկ է, ջած,  
արօտներու մէջ պահւըտած,  
բայց իմ փունջս ամեն մէկ տուն,  
ըլլայ աղքատ թէ մեծատուն,  
կը գտնէ մարդ, թարմ ու զուարթ,  
իբրև գարնան առաջին զարդ:

### 43. ՁԻՈՒ ՏՐՏՈՒՆՁԸ

Գիւղացին գարի կը ցանէր :

— Ատ ի՞նչ կ'ընես . գարին ինչո՞ւ հողին կը խառնես . — տրանջաց ձին . — ի՞նչ կ'ըլլայ , ինձի տայիր՝ ուտէի , քան թէ այդպէս կը փճացընես :

Տէրը ոչինչ չը պատասխանեց ու շարունակեց իր ցանը :

— Թէ ինձի տալ չես ուզեր , տո՛ւր իշուէ : — Աւտէ , ուժ առնէ , որ բարձես , տանիս շաղաց :


— Թէ իշուն ալ տալ չես ուզեր , տո՛ւր գոնէ հաւերուն : Կ'ուտեն , քեզի համար հաւկիթ կ'ածեն :

Տէրը լուռ գարին շաղ կու տար աջ ու ձախ :

— Ինչո՞ւ պատասխան չես տար . — հարցուց ձին նեղացած :

— Քու պատասխանդ ամառը կու տամ . — ըսաւ գիւղացին :

Ամառը ի՞նչ պատասխան պիտի տայ գիւղացին :  
Ուրիշ ի՞նչ կենդանիներ գիտես , որ գարի կ'ուտեն :




ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ

(6)

Սև հինեմ ,  
կանաչ գործեմ ,  
դեզին կտրեմ :

(7)

Կով մը ունինք ,  
կը կթենք հեղ մը տարին ,  
տուած կաթը  
կը վայլենք ամբողջ տարին :



### 44. ԱՐՕՐ

Այ , ծագեցաւ կարմիր արև ,  
տաք ու պայծառ է օրը ,  
դէհ , քաշեցէք , սիրուն եզներ ,  
առաջ տարէք արօրը :

Արտը վարենք , աղօս փորենք ,  
խոր աղօսներ հողին մէջ ,  
սերմը ցանենք , որ հունձ հնձենք ,  
խուրձեր դիզենք կային մէջ :

Կու գայ ձմեռ , մենք վախ չունինք ,  
ուրախ կ'անցնի մեր օրը ,  
ուտելու միշտ պաշար ունինք ,  
լեցուն կ'ըլլայ մեր հորը :

Դէհ , քաշեցէք սիրուն եզներ ,  
տաք ու պայծառ է օրը ,  
այ , ծագեցաւ կարմիր արև ,  
առաջ տարէք արօրը :

Ե՞րբ է գիւղացին ձմեռը սխուր : Յորե՞նէ զատ , ուրիշ ի՞նչ բանի պատար  
կը հաւաքէ գիւղացին ձմեռուան համար : Ե՞րբ կը հաւաքէ :

# 45. ԱՐԱԳԻԼՆԵՐԸ



1.

Փոքրիկ գիւղի մը ծայրը, բարձր ծառի մը վրայ, արագիլները դրեր էին իրենց բոյնը: Մայրը նստեր էր չորս ճուտիկները թևերուն տակն առած, իսկ քիչիկ մը հեռուն շէնքի մը տանիքը պահապան էր կեցեր հայր արագիլը: Մէկ ոտքը վեր քաշած՝ տնկուեր էր ան այնպէս՝ անշարժ, կարծես փայտէ ըլլար շինուած:

Վարը փողոցը կը խաղային խումբ մը երեխաներ: Արագիլը աչքերնուն ինկաւ թէ չէ՝ անոնցմէ մէկը սկսաւ արագիլի հին երգը, ու ամբողջ խումբն ալ անոր հետ.

«Հէյ, արագիլ, գնա տուն.

ինչ ես կեցեր ցից, արթուն.

կնիկդ, տե՛ս, բոյնին մէջ

կ'օրուի հանգիստ քունին մէջ:

Չէ՛, ճար չը կայ՝ կը մորթեն,

չորս ձագերդ ալ կը քերթեն,

չորսն ալ աղուոր մը աղեն,»

աղեն՝մաղեն ու կախեն...

— Մայրի՛կ, կը լսես՞, տղաքը ի՞նչ կ'երգեն. — ճւճացին փոքրիկ ձագուկները: — Կ'ըսեն մեզի կախեն պիտի:

— Դուք ձեր քունը քնացէք. ոչինչ ալ չըլլար. — պատասխանեց մայրը:

Բայց երեխաները կը շարունակէին երգել ու արագիլները չարացնել:

— Մի՛ վախնաք, փոքրիկներս. — սիրտ կու տար

մայրը. — նայեցէք, հայրիկը ինչպէս հանգիստ կեցեր է, ան ալ մէկ ոտքին վրայ:

— Ախ, մենք շատ կը վախնանք. — ըսին ձագուկները ու գլուխնին ետ քաշեցին բոյնէն ներս:

2.

Միւս օրը, երբ տղաքը նորէն հաւաքուեր էին խաղալու, կրկին հնչեց հին երգը.

«Չէ՛, ճար չը կայ՝ կը մորթեն,  
Չորս ձագերդ ալ կը քերթեն...»

— Ուրեմն իրա՞ւ մեզի մորթեն պիտի. — հարցուցին ձագուկները:

— Է՛, ինչէ՛ր կը խօսիք. — բացականչեց մայրը: — Դուք պէտք է մեծնաք, թռչիլ պիտի սորվիք: Ետքը միասին կը թռչի՛ք դաշտերը, գորտերուն հիւր կ'երթանք: Մեզի տեսնեն թէ չէ՛ խորը գլուխ կու տան անոնք ու կը հրամացրնեն. «Եկա՛ք, եկա՛ք. եկէ՛ք, եկէ՛ք, եկէ՛ք»: Մենք ալ կ'ըսկսինք ուտելու. այնպէս քէ՛ֆ ընենք որ...»

— Իսկ ե՞տքը. — հարցուց փոքրիկներէն մէկը:

— Ետքը կը հաւաքուինք այս կողմերու բոլոր արագիլներս ու կ'ըսկսինք մեր աշնան վարժութիւնները: Չէ՞ որ պէտք է լաւ թռչիլ գիտնաք. ատիկա շատ կարեւոր բան է: Ով լաւ թռչիլ չիմանայ՝ մեր խմբապետը կտո՛ւցով կը սատկեցնէ:

— Վայ. — բացականչեցին ձագուկները:

— Հապա՛. — շարունակեց մայր արագիլը: — Աշնան մեծ վարժութիւններէն ետքը թռչի՛ք պիտի սարերու ու անտառներու վրայով, հեռու հեռու, դէպի տաք երկիրները: Հոն մեծ գետեր կան, ահագին ճահիճներ կան, մէջը լեցուն գորտ. մտի՛ր ցետը ու կեր՛ ինչքան որ կ'ուզես:

— Ա՛, — բացականչեցին ձագուկները:

— Հապա՛. կը տեսնէ՞ք: Եւ երբ հոն այդպէս հրաշալի է,

հոս այնպէս ցուրտ կ'ըլլայ, որ ամպերը կը սառչին ու կտոր-կտոր, ճերմակ-ճերմակ կը թափին վար:


Արագիլը իբրև թէ ըսել կ'ուզէր՝ « ձիւն կու գայ »:

— Այդ շար տղանքն ալ պիտի սառչին ու կտոր-կտոր վար թափին. — հարցուց ձագուկներէն ամենէն վախկոտը:

— Չէ, բայց ատոր նման բան մը: Պէտք է փախչին, մանեն իրենց մութ ու պղտիկ սենեակները ու մկներու նման պահւրտին:

— Օ՛խ. — բացականչեցին ձագուկները բոլորը մէկ բերան:

3.



Մնացաւ ատեն մը:  
Փոքրիկ արագիլ-ները արդէն այնքան մեծցեր էին, որ կը կենային բոյնին մէջը և կը դիտէին իրենց չորս կողմը:

Հայր արագիլը ամէն օր անոնց համար գորտեր կը բերէր, փոքրիկ օձեր և այդ տեսակի ուրիշ համեղ պատառներ, ինչ որ

կտուցը իյնար: Եւ շարունակ զանազան պատամութիւններ կ'ընէր ճահիճի մասին:

— Դէ, ժամանակ է վերջապէս. պէտք է թռչիլ սորվի՞ք, թէ չէ. — ըսաւ օր մը մայր արագիլը:

Ու չորս ձագուկներն ալ պէտք է դուրս գային բոյնէն: Չորսն ալ կեցեր էին բոյնին եզերքը, կը բանային թևերնին, կը թափահարէին, բայց կը վախնային՝ ցած իյնան:

64

— Նայեցէք՝ ես ինչպէս կ'ընեմ. — կը սորվեցընէր մայրը. — Գլուխնիդ այսպէս առաջ կ'երկընցնէք, ոտքերնիդ ալ այսպէս ետ: Մէկ-երկու, մէկ-երկու: Աս է, որ կեանքի մէջ ձեզի պահէ պիտի:

Թուաւ ինքը կտոր մը: Փոքրիկներն ալ փորձեցին ու թրը՛մք, թրը՛մք, կէս մը թուան, կէս մը ինկան քովի տանիքը:

— Ես չեմ ուզեր թռչիլ. — ըսաւ փոքրիկներէ ամենէն վախուկը ու ետ քաշուեցաւ բոյնը: — Ինձի պէտքը չեն ոչ ճահիճը, ոչ տաք երկիրները:

— Կ'ուզես որ ցուրտէն փայտանաս, հա՞, երբ ձմեռը գայ: Թէ՞ կ'ուզես որ տղաքը բռնեն քեզի մորթեն, քերթեն, աղեն ու կախեն: Լա՛ւ. կ'ուզե՞ս՝ կանչեմ. — բարկացաւ մայրը:

— Չէ, չէ, մի՛ կանչեր. — ճշաց փոքրիկը. ճիգ մը ըրաւ, ու ինքն ալ իր եղբայրներուն քովն էր տանիքին վրայ:

4.

Երեք օր ետքը ձագերը քիչ մը թռչիլ սորվեր էին և արդէն կը կարծէին, թէ հա՛ իրենք ալ կարող են բարձր սաւառնիլ օդին մէջ, թևերնին փռել ու հանգստանալ, ինչպէս որ հայրիկը կ'ընէր:

Ու կը փորձէին, բայց իսկոյն գլուխ-կոնձի կը թաւալէին վար ու կ'ըստիպուէին արագ-արագ թևերնին շարժելու:

Վարը փողոցէն կ'անցնէին երեսաները ու կ'երգէին իրենց հին երգը:

— Մայրիկ, հիմա տեղը չէ՞, որ ցած թռչինք ու ատոնց աչքերը հանենք. — հարցուց ձագերէն մէկը:

— Դուք ձեր բանին կեցէք. — պատասխանեց արագիլը: —


Այս ձեր ըրածը շատ աւելի կարևոր բան է: Մէկ, երկու, երեք: Թռչինք ա՛յլ, զանգակատան շուրջը: Հիմա ալ ձա՛խ, մէկ, երկու երեք: Ա՛յ, այդ մէկը հաւնեցայ: Ասանկ որ երթայ՝ վաղը ձեզի կը տանիմ ճահիճ: Հոն ուրիշ շատ արագիլներ ալ կան. այնպէս մը ըրէք, որ ամենքն ալ ձեզի հաւնին. ըսեն՝ աս ի՞նչ լաւն են այս պղտիկները, աս որո՞ւնն են:

5

65

— Իսկ այն անպիտան տղաներէն մեր վրէժը հանելու  
չէ՞նք. — հարցուց նորէն ձագերէս մէկը :

— Թողէք երգեն , ինչքան կ'ուզեն : Չէ՞ որ դուք թռչիք  
պիտի դէպի ամպերը , պիտի երթաք տաք երկիրներ , իսկ  
անոնք հոն պէտք է մրսին : Ոչ կանաչ տերև են ունենալու ,  
ոչ ալ գորտ :



#### 46. ԱՐԱԳԻԼ

Արագիլ , բարով եկար ,  
հայ , արագիլ , բարով եկար .  
մեզի գարնան նշան բերիր ,  
մեր սրտերը ուրախ ըրիր :

Արագիլ , դուն երբ գացիր ,  
դուն երբ մեզի թողիր գացիր ,  
հա , փչեցին բուք ու բորան ,  
ձաղիկները բոլոր կորան :

Արագիլ , բարով եկար ,  
հայ , արագիլ , բարով եկար ,  
շինէ բոյնըդ դուն մեր ծառին ,  
մեզի կեցիր ամբողջ տարին :

#### 47. ՀԱՏԻԿԻ ԶԱՐԹՆՈՒՄԸ

Յորենի հատիկը պառկած էր հողին տակ :  
Եւ հատիկին մէջ խոր քուն էր մտած փոքրիկ սաղմը :  
Խոր քուն էր մտած ամբողջ ձմեռը :

Գարնան արևին շողքը եկաւ ու կանչեց .

— Արթնցիր , գարուն է :

Եւ հատիկին մէջ արթնցաւ սաղմը : Արթնցաւ , սաստիկ  
քաղց զգաց և սկսաւ ծծել իր քովի պաշարը :

Ծծեց , ծծեց ու մեծցաւ . պատուեց պարուրները ու խրեց  
արմատները փափուկ հողին մէջ , նոր կերակուր որոնելու :

Իսկ արևի ջերմութիւնը շարունակ վեր կը քաշէր ու  
սաղմը կը ձգտէր դէպի այդ ախորժեղի ջերմութիւնը , դէպի  
վեր :

Չիգ եկաւ , ձիգ եկաւ ու յանկարծ անոր դալար ծիլը  
դուրս նայեցաւ հողի մը կոշտին տակէն :

Ի՛նչ տաք էր , ի՛նչ պայծառ և ինչպէս ազատ իր շուրջը :  
Առտուան հովիկը քնքուշ գգուեց , դրաւ ցօղի կաթիլ մը  
անոր կիսաբաց թերթիկին վրայ ու փսփսած .

— Բարի լոյս :

Այդ ծիլը ասիւ ետք ինչպե՞ս պիտի մեծնայ եւ ի՞նչ պիտի դառնայ :

Յորենի գաւ ուրիշ ի՞նչ հացաբոյսեր գիտես :

Հացաբոյսերն ու խոտերը ինչպե՞ն ժամանակ կապրին :

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(8)

Բռնեմ ափովս ,  
շաղ տամ թաթովս ,  
մեռնի տարով ,  
ապրի բարով :

## 48. ԱՔԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳՐԻՏԸ

Օրին մէկը աքլոր մը  
 երբ որ աղբը կը խառնէր,  
 գտաւ հատ մը մարգրիտ,  
 որ աղբին մէջ կը փայլէր:  
 Կտցեց, դարձուց, որ տեսաւ՝  
 «Ի՛նչ ոչինչ բան է, ըսաւ,  
 վայ տամ մարդուն, վայ խելքին,  
 այս խենթ բանին կու տայ գին,  
 ինծի համար մէկ գարին  
 արժէ ասանկ հազարին:»

Ինչո՞ւ աքլոր մարգրիտ գին չը տուաւ:  
 Իսկ մարդը ինչու գին կու տայ:

## 49. ՄԺՂՈՒԿԸ

1.

Ոչ-ոք չը տեսաւ, թէ ինչպէս աշխարհք եկաւ փոքրիկ  
 մժեղը:

Արև օր մըն էր: Աչքը բացաւ, նայեցաւ չորս դին ու  
 բացականչեց.

— Ի՛նչ լաւ է:

Իսկոյն ոտիկները քսեց իրարու ու թռաւ: Կը թռչէր ու  
 կ'ուրախանար ամեն բանի վրայ: Իսկ վարը խոտը այնպէս  
 սիրուն կանաչ էր և խոտին մէջ կիսովին պահւումս. կակաչ  
 մը կը ժպտէր ու կը ժպտէր:

— Եկ՛ուր ինծի. — կը կանչէր ծաղիկը:

Մժղուկը իջաւ ծաղկին վրայ, ծծեց անոր հիւթը ու ըսաւ.

— Ի՛նչ լաւ է. և այս բոլորը իմս է:

Դեռ խօսքը բերանն էր, որ բռնացնելով եկաւ բրդոտ բոռը:

68

— Բը՛ռռ . . . առ ով է  
 նստեր ծաղկիս վրայ, բը՛ռռ . . .  
 առ ով կը խմէ ծաղկիս  
 քաղցը հիւթը. բը՛ռռ . . . :  
 Անդին կորսուէ, անպիտան  
 մժղուկ:

— Կեցիր, ամ ինչ տեսակ  
 բան է. — տղտղաց մժղուկը.  
 չէ՞ որ այս բոլորը իմս է:

— Բը՛ռռ . . . չէ, իմս է:



2.

Մժղուկը ոտքերը հագիւ ազատեց կատաղի բուռն:  
 Նստեցաւ խոտի մը վրայ, կը լցէր ծաղկի հիւթովը թաթ-  
 խուած տոտիկները ու բարկացած կ'ըսէր.

— Ինչպէս կոպիտ էր այդ բոռը, գարմանալի բան է:  
 Չէ՞ որ այս բոլորը իմս է, արևն ալ, խոտն ալ, ծաղկին ալ:

— Ո՛չ, ներեցէք, իմս է. — խօսեցաւ թաւ ու գիրուկ  
 ճիճու մը, որ վեր կը սողար խոտի ճողունին վրայով:

Մժղուկը նկատեց, որ ճիճուն թռչիլ չգիտէ ու համար-  
 ձակ ձայնը բարձրացուց:

— Ներողութիւն, բարեկամ, կը սխալիս. բոլորը իմս է,  
 բայց ոչինչ, դուն ալ կեր, ես քեզի չեմ արգիւտ:

— Աղէկ, աղէկ, նայէ որ խոտիս չղպչիս. հոս ձեզմէ  
 այնքան կայ որ: Շարունակ կը տրոգաք ու կը թռչկոտիք:  
 Դուք թեթևամիտ ժողովուրդ էք, իսկ ես ծանրաբարոյ ճիճու:  
 Դէ, հայտէ, երթաս բարով:

69

Մժղուկը թողեց ու թռաւ . թռաւ հեռուն , տեսաւ ջուր :

— Այս մէկը իմս է ու իմս , այս ջուրը : Ախ , ինչ լաւն է , հոս խոտ ալ կայ , ծաղիկ ալ :

Եւ անանկը թռչին ամեն կողմէ ու կու գան ուրիշ մրժղուկներ ալ :

— Բարի օր , քուրիկ :

— Աստու բարին , քուրիկներ : Ատ ուր կը թռչիք :

— Կը խաղանք : Դուն ալ եկնուր մեզի հետ : Այնպէս ուրախ ենք , որ . . .

Ու գացին կը խաղային ջրին վրայ , կը թռչէին , կը տըղ-գային , պտոյտներ կ'ընէին :

Յանկարծ , պըժժ , ինչպէս որ մէկը քար մը նետէ , ճնճղուկը ինկաւ մժղուկներուն մէջ ու անցաւ :

— Վայ , վայ , — ժը-ժըլացին բոլորը ու ցրի-եկան ասդին-անդին :

Մէջ մըն ալ երբ ուշքի եկան , տեսան՝ շատերն էին պակեր :


— Ախ , անզգամը . — կը հայհոյէին ձեր մժղուկները . — ամբողջ տասը հոգի ոչնչացուց :

« Վան , տասը հոգի . ասիկա բոռէն ալ անցաւ : »

Մեր մժղուկի սիրտը ան ինկաւ : Միւս նորեկուկներուն հետ միասին մտաւ ճահճի խոտերուն մէջտեղուանքը ու ձայնը քաշեց :

Բայց հոս ալ ուրիշ փորձանք մը : Երեք մժղուկ ձուկը կերաւ , երկու հատ ալ գորտ մը տարաւ :

— Այս տեսակ ալ բան կ'ըլլայ . — զարմացեր մնացեր



էր մեր մժղուկը : — Միթէ կարելի՞ է այսպէս ապրիլ :

Գիշերը ինկաւ , մութը վրայ հասաւ ու բոլոր մժղուկները մտան եղէգնուտի տաք-տեղերը ու պահուեցան :

Վերը երկինքը լեցուեցաւ աստղերով , լուսինն ալ ծա-պեցաւ ու այս ամենը միասին ցոլացին ջրին մէջ :

Այնպէս սիրուն էր :

— Ախ , իմ լուսնեակս , իմ աստղերս . . . — շընչեց , մժղուկը , բայց վախէն այնպէս կամաց շընչեց որ ոչ-մէկը չը լսէ :


— Ախ , իմ աստղերս . . . — կրկնեց կամացուկ ու քունը տարաւ :

Մժղուկը ինչո՞ւ այդպէս կամաց կ'սէր վերջը , քե բոլոր իրն է :

Ինչ նմանութիւն կայ այս՝ պատմութեան ու 58-րդ երեսի մանուշակի պատմութեան մէջ :

Ուրիշ ո՞վ կը կարծէ , քե բոլոր իրն է ու իրեն համար :

Ինչ բան է այդ « բոլոր » : Ուրեմն է այդ « բոլոր » :



1.

Սերմ կը ցանէր գիւղացին  
 իր պարտէզը ցանոցին :  
 Արջը եկաւ . « Բարև քեզ .  
 հոտ միս-մինակ ի՞նչ կ'ընես .  
 եկուր , այ մարդ , միանանք ,  
 մէկտեղ ընենք վար ու ցանք .  
 վար ու ցանքը մեր կ'իսրար ,  
 հունձն ալ ընենք հաւասար » :



— Աչքիս վրայ , սրջ աղբար ,  
 օտար չենք , ս , մենք իրար .  
 կ'ուզէս , այ , այս անգամը  
 ցանենք մօտիս շաղգամը :  
 Քեզի փիրն ու ցօղունը ,  
 արմատն ինծի՛ հողունը :

2.

Խոշոր , քաղցր շաղգամը  
 լաւ ուռեցաւ աշնանը :

Արջ աղբարն ու գիւղացին  
 շաղգամն հողէն հանեցին ,  
 աղբարն առաւ փրեքը ,  
 արմատներն ալ ընկերը :  
 Արջը տեսաւ՝ խաբուեցաւ ,  
 մարդուն զէմը լարուեցաւ .  
 « Ինծի խաբէ՞ գիւղացին .  
 կեցիր , ես միւս ցանոցին

անոր կու տամ ցօղունը ,  
 ինծի կ'առնեմ հողունը :

3.

Յաջորդ տարին ցանոցին  
 արջին ըսաւ գիւղացին .  
 — Աղբար , նորէն դուն ու ես  
 եկուր ցանենք կէսուակէս :  
 Արջը թէ՛ « Հա , շատ բարի  
 միայն անշուշտ այս տարի

քեզի փիրն ու ցօղունը ,  
 արմատն ինծի՛ հողունը : »  
 — Համաձայն եմ ես նորէն .  
 այս հեղ ցանենք մենք ցօրեն :

Բանը յաջող էր մարդուն ,  
 արջ աղբօր հետ զնաց տուն ,  
 ցօրեն լեցուց տոպրակը  
 տուաւ անոր շաղակը



ու ցանեցին շուտ արտը  
 բրդոտ աղբարն ու մարդը :

4.

Երբ հնձեցին յունիսին  
 ընկերները միասին ,  
 հասկերն առաւ գիւղացին ,  
 իսկ ի՞նչ տանէր սարեցեն :

Արջը տեսաւ , որ նորէն  
խաբեց մարդը անօրէն ,  
արդէն սաստիկ բարկացաւ ,  
թքեց , անկէ հեռացաւ .  
ու այն օրէն ոխ ունի ,  
շատ է մարդուն թշնամի :

Ուրիշ ի՞նչ բոյսերու արմատներ կ'ուսեմք :  
Իսկ ի՞նչ բոյսերու փոերն ու ցօղունը :



## 51. ԿԱՐՄՐԱԿԱՏԱՐԸ

Աստուած թռչունները երբ կ'ըստեղծէր՝ ոտքեր տուաւ ,  
որ ոստոստեն , թևեր տուաւ , որ թռչին , կտուց տուաւ , որ  
կացեն , կացեն , ուտեն ու երգեն :

Եւ երբ բոլոր թռչունները պատրաստ կեցած էին անոր  
չորս կողմը , Աստուած բացաւ իր ներկերուն տուփը և սկսաւ  
գոյն-գոյն ներկել անոնց փետուրները :

Աղաւնին եղաւ կապոյտ , դեղձանիկը դեղին , ազուաւր  
սև , ճայը ճերմակ , և այսպէս բոլոր թռչունները ներկեց  
Աստուած ու գոյնգոյն գարգարեց :

Մնաց միայն մէկը , որ չէր ուզծա ուրիշները հրմշտէ  
ու առաջ անցնի . երբ վերջապէս ան ալ մօտ եկաւ՝ ալ ներկ  
չէր մնացեր . Աստուած բոլոր գոյները հատեր էին :

Մնացեր էին պարապ ամանները :

Խեղճ թռչունը լալ սկսաւ , որ բոլոր թռչունները սիրուն-  
սիրուն փետուրներ ունին , իսկ ինքը ոչ :

— Մի լար , — ըսաւ Աստուած . — բան մը կ'ընենք :  
Ամաններուս պատերուն դեռ քիչիկ մը մնացեր է : Մօտե-  
ցի՛ր , նայի՛մ :

Ըսաւ , առաւ վրձինը ու բոլոր ամաններէն մնացած  
ներկերը քսեց , քսմանց թռչունի փետուրներուն :

Հոս կապոյտ , հոն գորշ , կտոր մը դեղին , կտոր մը կա-  
նաչ , մէկ կէտը ճերմակ , միւս կէտը սև , գլուխն ալ կարմիր .  
ու ստացուեցաւ անձ մեր խայտաբղէտ կարմրակատարիկը :



ՀԱՆԵԼՈՒԿ

(9)

Հաւկիթ կ'ածէ՛ հաւ չէ ,  
խոտ կարածի՛ տաւար չէ ,  
կը կռկոսյ՝ կաքաւ չէ ,  
ան ի՞նչ է :



Թ Ռ Զ Ո Ւ Ն Ի Մ Ը Մ Տ Ա Ծ Մ Ո Ւ Ն Ք Ը

Առաջ կ'ապրէի փոքրիկ տան մը մէջ  
առատ ու անփոյթ .

աշխարհքը ինծի կտոր էր անվերջ ,  
կեղևը կապոյտ :

Այդ փոքրիկ տունէս հազիւ դուրս եկած՝  
բոյնս տեսայ ես .

ըսի՝ աշխարհքը յարդէ է շինուած ,  
ու շինուած մօրմէս :


Օր մըն ալ բոյնէն գլուխս հանած  
կը նայիմ չորս դին .

տեսնեմ՝ աշխարհքը տերևէ շինուած ,  
մեր բոյնը սրտին :

Հիմա կը թռչիմ , կ'երթամ սրբնթաց  
հեռով , վեր ու վար ,

բայց թէ աշխարհքը ինչէ է շինուած ,  
ալ չեմ հասկընար :

Ինչպէ՞ս պիտի մտածեմ արտուսիկը, ծիծեռնակը :  
Ուրիշ ի՞նչ կենդանի գիտես , որ ձուէ կը ծնի :



53. Ա Ն Զ Ո Ւ Ն Ի Զ Ո Ւ Տ Ի Կ Ը

1.

Երեք շաբաթ էր , թուխար չէր ելներ հաւկիթներուն  
վրայէն : Տասներկու բրդոտ ճուտիկներ դուրս էին եկեր  
արդէն , մնացեր էր միայն կանաչաւուն փոքրիկ հաւկիթ մը :

Վերջապէս առտու մը թուխար նկատեց , որ հաւկիթին  
ներսէն մէկը թրք-թրք կը զարնէր : Սաստիկ ուրախացաւ ,  
խսկոյն կոտրեց հաւկիթը կտուցով ու մէջէն դուրս եկաւ  
ճուտիկը :

Բայց նորեկը նման չէր իր միւս եղբայրներուն ու քոյ-  
րերուն : Աւելի բրդոտ էր , աւելի դեղին , ոտիկները կարճ-  
կարճ , գլուխը լայն , կտուցը տափակ :

«Սա ի՞նչ անճոռնի է» մտածեց մայրը, քիչ մը տխրեցաւ,  
բայց շուտով ինքըզինքին սիրտ տուաւ , թէ՛ «Ոչինչ, կը մեծ-  
նայ , կ'աղուորնայ » :

2.

Ժողվեց իր բոլոր ճուտիկները ու հպարտ-հպարտ  
կուրսկալով՝ ելաւ բակը : Փոքրիկները արագ ու աշխուժ  
77

կը վազվզէին իր շուրջը . միայն նորածինը կը քայլեր ծանր ու օրօրուելով :

Մայրը տարաւ անոնք առուին ափը , որ քուշուջ ընեն : Անճոռնի ճուտիկը շուրջը տեսնելուն պէս՝ ինկաւ մէջը :

Մայրը սարսափած կը ճշար , կը կանչէր ու թևերը թափահարելով կը նետուէր դէպի շուրջը : Միւս ճուտիկներն ալ կը ծծւային , կը վազվզէին ասդին-անդին :

— Օգնեցէք , օգնեցէք , աղբարիկը խեղդուի պիտի :

3 .

Ամբողջ բակը իրար անցաւ :

Հաւերը կը կշկշային , աքլորը բարձր ծղրղաց , փքուած հնդկահաւն ալ ամուր-ամուր կը դուտղուտար :

Իսկ անճոռնի ճուտիկը թեթև մը կը շարժէր իր թաղանթաւոր թաթերը ու հանգիստ կը լողար ջրին երեսը :

Պառաւ մամը լսեց թուխտի ճիչն ու բակի աղմուկը . դուրս վազեց , տեսնէ՛ ինչ է պատահեր , չըլլայ թէ ուրուր երևցած ըլլայ :


Ու տեսաւ թէ չէ՛ զարկաւ ծունկերուն :

— Վայ , կուրանամ ես . աս ի՞նչ եմ ըրեր . հաւին տակը բազի ձու եմ դրեր :

Եթէ բուխար ո՛չ բէ հաւ , այլ բազ եղած ըլլար , անոր աչքին այդ նուսիկներէն փակի՞ հասք անճոռնի պիտի երեսային : Ինչո՞ւ :

Ինչո՞ւ բազիկը կրնայ լող սար , իսկ հաւերը՝ ոչ :

Ինչպէ՞ս կ'ըլլար այս պատմութիւնը , եթէ պառաւը այդ միեւնոյն ասուերեք հաւկիթները թխական բազի մը սակ դրած ըլլար : Պասսիկ՝ :



#### 54. Տ Ղ Ա Ն Ո Ւ Ա Ր Ե Ի Ը

— Արև՛ , նորէն դուն կը մեկնիս ,  
լեռան ետին ի՞նչ գործ ունիս :  
Կեցիր քիչ մը լեռան կողին ,  
դեռ չեմ ուզեր ես անկողին ,  
ես դեռ գուարթ խաղալ կ'ուզեմ ,  
զով պարտէզին մէջ վազվզեմ :

— Լեռան ետին , այ , ժիր տղայ ,  
քեզի նման պզտիկ շատ կայ ,  
որ կ'ըստասեն իմ երթալուս ,  
խոր քուն էին մինչև ի լոյս ,  
անոնք նոյնպէս խաղալ կ'ուզեն ,  
զով պարտէզին մէջ վազվզեն :

Ինչպէ՞ս է , որ միեւնոյն ասեմ տեղ մը նոր կ'երթան անկողին ,  
իսկ ուրիշ տեղ մը արդէն կ'ելեն անկողնէն :

— Հայրի՛կ, ինչ կայ մեր այգիներէն անդին. — հարցուց Յասմիկը :

- Չգիտե՞ս, աղջի՛կս : Արտեր :
- Իսկ արտերէ՛ն անդին :
- Սարեր : Նայէ :
- Իսկ սարերէն անդին :
- Նորէն լեռներ, նորէն ձորեր, ծովեր :
- Իսկ ծովերէ՞ն անդին :
- Ուրի՛շ երկիրներ, ուրի՛շ աշխարհներ, նորէն ծով, նորէն ցամաք : Եւ գիտե՞ս, հողի՛ս, եթէ այդպէս ճամբորդես, շիփ-շիտակ երթաս ու երթաս՝ ուր կը հասնիս :
- Ո՞ւր :
- Ճիշտ հոն, ուր հիմա կեցած ես :
- Վահ. — գարմացաւ Յասմիկը :

Խնձորին վրայ նստե եին երկու նանն. մէկը նամբայ ինկաւ, ուղիղ գծով գնաց ու գնաց միտս առաջ : Ո՞ւր հասաւ : Գիտե՞ս՝ ինչ ձեւ ունի երկիրը :

56. ՈՒՇԱՅԱԾ ՃԱՄԲՈՐԴ

Էյ, դուն ճամբորդ, ուր կ'երթաս,  
մուժ գիշեր է, ուշ արդէն.  
Նայէ, բեզի կը կանչէ  
վառ ճրագը խրճիթէն.  
վա՛ր դիր բեռդ, էյ ճամբորդ,  
մուժ գիշեր է, ուշ արդէն :

Վերի նամբորդը ինչո՞վ կ'երթար : Ի՞նչ տեղերով կ'երթար :  
Գու՞ն ալ նամբորդած ես : Ճանապարհին գիշերը ո՞ւր ես իջած :  
Ինչո՞վ ես նամբորդած :

— Ըն՛ր՛, ու՛ֆ. — խորը տքաց գամը՝ տախտակին կուրծքը խրուեցաւ թէ չէ :

— Վահ, քիչ մը քաղաքավարի. այդպէս չէն սեղմեր. — բողոքեց տախտակը՝ նորեկին տեղ տալով ծոցին մէջ :

— Ի՛նչ քաղաքավարութեան ժամանակ է, գլուխս ջարդեց այդ անիծածը. — վրայ տուաւ գամը չարացած :

Իսկ երբ մուրճի վերջին հարուածը անցաւ ու գամի գլուխը քիչ մը հագստացաւ, փոխուեցաւ և անոր տրամադրութիւնը :

— Դէ, ասկէ ետքը երևի կը հագստանամ. այսպէս ալ չարչարանք. — բացականչեց ինքնիրենը :

— Չարչարանք, չարչարանք. մարդ իմանայ՝ ի՞նչ բանի վրայ էք գուք, գամերդ, որ բոլորդ ալ շարունակ այդպէս կը տրտնջաք. — գայրացաւ տախտակը : — Չարչարանքը, այ, մերն է. այնքան կը տաշեն, կը տաշտշեն, հողի կը հանեն. ետքն ալ ամեն կողմէն կը ծակծկեն. թէ չէ՛ ձեզի՞ ինչ է եղեր :

— Կը կարծե՞ս. — պատասխանեց գամը. — այդպէս չէիր խօսիր, եթէ զիանայիր՝ ուրկէ կու գամ և ինչեր է անցեր զլիսէս :

— Ո՞ւրկէ կու գաս որ :

— Մուժը աշխարհքէն :

— Մուժը աշխարհքէն :

— Էյ, այս քանի՞ հազար տարի է թաղուած էի գետնին տակը քարերու հետ միասին :

— Հապա ինչպէ՞ս դուրս եկար :

— Ես ի՛նչ գիտեմ : Եկան, փորեցին, ջարդեցին, լոյս աշխարհ հանեցին :


— Ե՞տքը :

— Ետքը լեցուցին հնոցը, սարսափելի կրակ էր : Վահ,

այդ տաքութեանը երկաթ կը դիմանայ. թուլցանք, հալեցանք, վերէն լեցուցեր էին, վարէն դուրս հոսեցանք : Հազիւ էի քիչ մը զովցեր՝ ալ ինչ ծեծ ու տփոց, բարակցուցին, բարակցուցին, վերջն ալ ահագին մկրատներով կտրեցին, զատեցին ինծի միւսներէն, զարկին գլխուս, տափակցուցին, ետքն ալ ոտքս խարտոցի դրին : Բայց, էհ, — աւելցուց յանկարծ զամը արհամարանքով. — դուն ի՞նչ պիտի հասկնաս այս բոլորէն . դուն, որ ոչ այդ հարուածներու մասին գաղափար ունիս, ոչ կրակ ես զգացեր մարմնիդ, ոչ ալ լոյս աշխարհքէն դուրս բան ես տեսեր կեանքիդ մէջ :

Երկաթէն զաս ուրիշ ի՞նչ սեռակ բաներ կը հանեն գիտնի խորէն : Ի՞նչ անուն կու տանք այդ հանած բաներուն, ի՞նչ անուն կու տանք այն տեղին, ուրկէ կը հանեն :  
Ուրիշ ի՞նչ գործիքներ կը շինենք երկաթէն :

### 59. ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ




Գուն մի ըլլար, ուրագի պէս,  
դէպի քեզի, դէպի քեզի .  
նայէ՛ ըլլաս սղոցի պէս,  
մէյ մը քեզի, մէյ մը մեզի :

Ի՞նչ սեռակ մարդն է ուրագի նման :  
Գուն ի՞նչ պիտի ընես, որ սղոցի նման ըլլաս :

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(10)

Գոմ մը գիտեմ՝ հազար գլուխ ոչխար կը տանի,  
կապ մը խոտ չի տանիր :



### 60. ՄՐՁՆՈՑ

1.



Անտառին բերանը փոքրիկ-փոքրիկ բլրակ մը կար. ամբողջ քաղաք մըն էր ատիկա : Այդ քաղաքին մէջ երկար փողոցներ կային, լայն ու կոկիկ բնակարաններ, լեցուն շտեմարաններ, մէկ խօսքով ամեն բան իր տեղը, կարգին ու խելացի : Վարպետները բնակարան կը շինէին, մշակները պաշար կը ժողովէին, գայեակները երեխաները կը

նայէին, իսկ զինուորները քաղաքը կը պաշտպանէին :

Եւ հանգիստ ու բաղդաւոր կ'ապրէր այդ քաղաքը : Եւ այդ քաղաքը մըջնոցն էր :

2.

Օր մը սարսափելի հսկայ մը, այսինքն մօտիկ զիւզէն տղայ մը, տեսաւ այդ քաղաքը, իր ահագին ոտքը դրաւ քաղաքին վրայ ու, Տէր Աստուած, ինչ աւերմունք գործեց :

Բնակարաններն ու շտեմարանները փռւլ եկան, հողը լեցուց փողոցները : Գայեակները մանուկ մըջիւններն առին ու անտառը փախան. հայրերը, մայրերը և մշակները մոլորած այս ու այն կողմ կը վազվզէին : Իսկ ահագին ոտքը կը շարունակէր փորփրելը :

3.

Միայն կտրիճ զինուորներն էին, որ զլուխնին չը կտրուսին :  
— Կռէլ . — կանչեցին անո՞ք . — խածնենք ու սպաննենք այդ անիրաւը :

Ու առաջ նետուեցան, անոնց ետևէն այ միւս մըջիւնները: Յարձակուեցան հսկային վրայ, կծոտեցին, թոյն լեցուցին, ուսցուցին խածած տեղերնին:

Հսկան ուճերը թափ կու տար, կը ճզմէր յարձակողները: Քաջ ինքնապաշտպաններէն շատերը ինկան այդ մեծ պատերազմին մէջ, բայց թշնամին վերջապէս յաղթուած թողեց քաղաքն ու հեռացաւ:

Կենդանի մնացածները վերադարձան քաղաք: Նորէն շինեցին իրենց բնակարաններն ու շտեմարանները, մաքրեցին փողոցներն ու հրապարակները:


Եւ նորէն հանգիստն ու կարգը թագաւորեց քաղքին մէջ: Վարպետները ու մշակները ուրախ-ուրախ կ'աշխատէին, իսկ դայեակները կը կրթէին մանուկ մըջիւնները, որ մեծնան ու դառնան իրենց քաղքին համար կտրիճ մշակներ ու պահապաններ:

Տղան ինչո՞ւ կը քանդէ մշտնոյր:  
Ինչո՞վ յաղթեցին մշտնոյրները:

## 61. ՓՈՂ ՓԻՍՕՆ

Փիսօն, փիսօն մլաւան,  
Թաւրիզ թողեց, փախաւ վան,  
լեզուն թաթխան, երկար պոչ,  
ինչ որ ուզեց, ըսին՝ ո՛չ:

Փիսօն գնաց գողէգող,  
փորն անօթի, սիրտը դող,  
դունչը հասցուց կովկիթին,  
շերեփն իջաւ ճակատին:



## 62. ԿԱՊԻԿԸ

1.

Բակէն տափի ձայն լսուեցաւ:

— Կապիկ, մայրիկ, կապիկ են բերեր. — բացականչեց Սշոտը ու վազեց պատուհան:

Խոշոր տան մը դարպասին առջևը հաւաքուեր էին աղայ ու աղջիկ, ծառաներ, անցորդներ, մեծ ու պզտիկ:

Մէջտեղը կեցեր էր մարդ մը, կը դրմբ-դրմբացներ տափը, իսկ քովի ընկերը կ'երգէր ու կը խաղցներ կապիկը՝ շղթայէն քաշքշելով.

« Կապիկ, ցոյց տուր՝  
տեսնենք ի՞նչպէս մեր աշխարհի  
աղջիկները կ'եղնեն պարի: »

Դափ դարնողը փոխնիփոխ կը կրկնէր ընկերոջ խօսքերը, բազմութիւնը կը խնդար, բակէն կը հաշէր շունը

Մինչ կապիկը չորս թաթ վեր-վեր կը ցատկէր, իբրև թէ պար կու գար. և իր մարդանման դէմքը ամեն վայրկեան անհանգիստ կը դարձներ մէյ մը տիրոջը աչքերուն, մէյ մը հաջող շան կողմը:

« Կապիկ, ցոյց տուր՝  
տեսնենք ինչպէս մեծ շուկայէն  
կու գայ աղան տնտնալէն : »

Կապիկը կը յենուէր փայտին, ձեռքը կը դնէր մէջքը և  
պոչը գետնէն քաշ տալով՝ առաջ կու գար :

« Կապիկ, ցոյց տուր՝  
տեսնենք ինչպէս լեռան մօտը  
կը պահպանէ հովիւն հօտը : »

Կապիկը փայտը կը դնէր վզին, երկու թևերը կը նետէր  
վրան ու կը դառնար տիրոջ շուրջը :

2.

Երեխաները ուրախութենէն կ'աղաղակէին, իսկ շունը  
աւելի ու աւելի սաստիկ կը հաջէր :

Ամեն հաջոցին կապիկը կը ցնցուէր և յաճախ ալ կը  
սխալէր : Այն ատեն տէրը ձեռքի փայտը կ'իջեցնէր անոր  
գլխուն ու շղթան այնպէս ամուր ձիգ կու տար, որ կենդա-  
նին վախէն կը կրճտացնէր ակօսաները, անորոջ ձայն մը կը  
հանէր և իսկոյն կ'ուղղէր սխալը :

« Կապիկ, ցոյց տուր՝  
ինչպէս կ'երթայ վերի թաղը  
մեր բրուտը կաղնիկաղը : »

Կապիկը ետևի թաթերովը կը բռնէր փայտը և առջևի  
թաթերուն վրայ կը պտտէր՝ պոչը ցից ըրած :

« Կապիկ, ցոյց տուր՝  
տեսնենք ինչպէս գինովները  
կը թաւալին փողոցները : »

Կապիկը փռուեցաւ կռնակին վրայ ու ելաւ ոտքի, գլոր-  
ուեցաւ նորէն ու կրկին ելաւ . . . : Այդ միջոցին շունը ամ-  
բողջ ուժովը քաշեց իր շղթան ու չը կրնալով կտրել, ծառս  
եղաւ ետևի ոտքերուն վրայ ու խռպոտ ձայնով մը կատաղի  
կերպով սկսաւ հաջել :

Կապիկը սարսափահար թռաւ անդին, երկու ձեռքով աշ-

խատեցաւ ազատուի վզնոցէն, աւելի՛ վախցաւ շուրջը բարձ-  
րացած աղմուկէն ու իրարանցումէն, յանկարծ վայրենի ճիչ  
մը արձակեց, մագլցեցաւ տիրոջը հագուստներուն ու կպաւ  
անոր կրծքին :

Կպաւ ու իր սոսկումով լի, յառած աչքերը չէր հեռացնէր  
շունէն :

Ամեն կողմէն գետին թափեցին շաքար, կաղին, տասը  
փարանոցներ, բայց կապիկը չը թողեց տիրոջ կուրծքը, նոյն  
խիստ այն ժամանակ, երբ տէրը կռացած կը ժողվէր այդ  
ամենը :

3.

Ամբողջ օրը Աշոտը չը կրցաւ մոռնալ կապիկի սարսափա-  
հար նայուածքը : Եւ երբ պառկեցաւ անկողին նորէն երկար-  
երկար կը մտածէր :

Յանկարծ իրեն այնպէս թուեցաւ, թէ բան մը կը խեղ-  
դէր իր կոկորդը . ձեռքը տարաւ պարանոցը, տեսաւ՝ վզնոց  
է : Վզնոցը ամուր կը սեղմէր և մէկը ամեն վայրկեան ուժով  
կը քաշէր շղթայէն : Աշոտը աչքերը բարձրացուց ու տեսաւ,  
որ իր վզի շղթային ծայրէն բռներ էր անագին կապիկ մը .  
իսկ անոր քոյն ալ կեցեր էր ուրիշ մեծ կապիկ մը, տափ կը  
զարնէր ու կ'երգէր .

« Աշոտ, ցոյց տուր՝  
տեսնենք ինչպէս մեր աշխարհի  
աղջիկները կ'ելնեն պարի : »

Եւ Աշոտը պարզ կը լսէր պատուհաններէն ու դռներէն  
իրեն նայող, այլ և իր շուրջը խոնուած մեծ ու փոքր կապիկ-  
ներու հռնոցն ու ծիծաղը, շան սարսափելի հաջոցը . իսկ իր  
գլխուն վրայ կ'երերար խաղցրնոց կապիկի փայտը .

« Աշոտ, ցոյց տուր՝  
տեսնենք ինչպէս գինովները  
կը թաւալին փողոցները : »

Աշոտը կը գլորուէր ու կ'ելնէր ոտքի, նորէն կը գլորուէր  
ու նորէն կ'ելնէր . . .

Մէյ մըն ալ յանկարծ կատաղած շունը ուժով մը վեր  
ցատկեց, փրցուց վզի շղթան և յարձակեցաւ Աշոտի վրայ :  
Աշոտը գգաց, թէ ինչպէս շան սուր ակօսները կը խրուէին  
իր ոտքը : Յաւէն ու սարսափէն ճշաց ու վեր թռաւ .

— Մայրիկ, մայրիկ . . .

Անկողնին քովը կեցեր էր մայրիկը՝ մոմը ձեռքը և ան-  
հանգիստ կը նայէր տղուն :

Մեր երազները սովորաբար ինչ բանի հետ են կապուած :

Ասոր համար ուրիշ օրինակ մըն ալ պատահե՞ր ես այս գրքին մէջ :

### 63. ԿՈՐԵԿԻ ՀԱՏԻԿ

Թռչնակը պառկեր փոքրիկ բոյնին մէջ ,  
երազ կը տեսնէր անուշ քունին մէջ .  
Իբրև թէ լուսին գիշեր է պայծառ  
ու անթիւ աստղեր վառ , իրար մօտիկ ,  
բոլորն ալ մէյ-մէկ կորեկի հատիկ ,  
և իբրև ինքն ալ կը թռչի վերէն ,  
կը կտցէ տիք-տիք ,  
հատ-հատ աստղերը իրենց տեղերէն :

Բայց երբ արևը ճիւղքին նայեցաւ ,  
երբ անուշ քունէն թռչնակն արթնացաւ ,  
կտուցը քսեց աստին ու անդին  
ու մեծ զարմանքով ըսաւ ինքնիրեն՝  
« Ամբողջ գիշերը չէ՞ որ վերերէն  
ես կը ժողվէի կորեկի հատիկ ,  
կ'ուտէի տիք-տիք ,  
այսպէս անօթի ինչո՞ւ եմ նորէն :

Ա Ռ Ա Մ

Հաւը երազը կուտ կը տեսնէ :



### 64. ԽՐՏՈՒԻԼԱԿ

1.

Գարիի արտ մը ունէր գիւղացին : Գարին հասեր էր :  
Ճնճղուկները ամեն կողմէն հաւաքուեր էին , կ'ուտէին ,  
հա՛ կ'ուտէին :

Գիւղացին գար թէ չէ, կը փախչէին, կը թառէին արտէն  
քիչ մը հեռուն՝ թփերուն վրայ, կը թռչկոտէին, կը ծւժւային,  
կարծես խեղճ մարդը ծաղրել կ'ուզէին :

Գիւղացին տեսաւ , որ այսպէս շարունակուի իրեն բան  
չէ մնալու :

Մտածեց , մտածեց , գնաց բերաւ ձող մը , ցցեց արտին  
մէջտեղը , ուրիշ փայտ մըն ալ խաչի պէս կապեց անոր , իր  
հին մաշուած հագուստը հագցուց վրան , քրքրուած գզակ մը  
անցուց ծայրը , քիչ մը խոտ փրցուց , կապոց մը ըրաւ , կա-  
խեց անոր թեէն ու հեռացաւ :

Կարծես իսկը մարդ ըլլար՝ արտին մէջտեղը կեցած ,  
մանաւանդ երբ հովն ալ կը փչէր ու կը շարժէր հագուստին  
փէշերն ու երկար թևքերը :

« Դէ , հիմա տեսնենք , անիծածներ , ձեզմէ ո՞վ է մօտ  
գալու » . — մտածեց մարդը ու գնաց բանին :

— Գնաց, զնաց. — ծածկացին ճնճողուկները ու բոլորը մէկէն վեր թռան թփերէն, որ վրայ թափին արտին:

— Մ<sup>ո</sup>ս ինչ բան է. այդ անպիտանը դեռ չէ գացեր. — զարմացան բոլորն ալ, օգին մէջ մէկ-երկու շրջան բրին ու նորէն իջան ցած թփերուն վրայ:

Ու կ'ըսպասէին, կը ծածկային, կը ծղրղային, մինչև որ մարդը ելնէ ու կորչի: Բայց մարդը պինդ կեցեր էր իր մէկ ոտքին վրայ, արտին մէջտեղը ու կը շարժէր թևերը:

« Հապա թէ մօտ կու գաք »:

Ճնճողուկները համբերեցին, համբերեցին ու համբերութիւննին հատաւ:

— Է, եկէք երթանք, գոնէ արտին եզերքներէն կը կրտցենք քանի մը կտուց. — ըսաւ անոնցմէ ամենէն համարձակը:

— Կը զարնէ. — պատասխանեց վախկոտ մը:

— Կը զարնէ՝ կը փախչինք:

Ու մէկ-երկու հատը մօտեցան արտին:

Իսկ միւսները ըսին.

— Է, աղբար, ո՞վ գիտէ, ինչ սատանութիւն կայ տակը: Մէջէն փորձանք մը չեյնէ: Ան որ թևերը այդպէս կը շարժէ ու գլուխն ալ այդպէս կը զրմբ-զրմբացընէ, ատիկա աղէկ նշան չէ:

Ըսին ու թռան գացին ուրիշ արտեր:

Գիւղացին ուրիշ ի՞նչ միջոցներով կ'աւսասի ննկողուկները հեռու պահէ իր արտերէն ու այգիներէն:

Ճնճողուկներէն զաւս ուրիշ ո՞վ կ'արժաւէ գիւղացիի արտին վրայ մեծ ախորժակով:

#### Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Մեր տունը եկան երէկ ցերեկ երեք երէց.  
երեք երէց երէկ ցերեկ եկան,  
երեք երէց երէկ ցերեկ գացին:

Ալեքսան

ու իր տասներինը փեսան,

քսան գերանդի

ու քառասուն յեսան:

Նստեցան,

սրեցին,

կերան, խամեցին,

պառկեցան, քնացան,

բաղեցին,

փոցխեցին,

կապեցին,

բարդեցին,

վերջին անգամ որ համբեցին,

տեսան՝

բարդէն պակաս էր քսան:

Քսան հոգի միասին այդ օրը բանի՞ խուրձ բարդեցին, երբ որ մեկ բարդը երեսուն խուրձ է:

Ի՞նչ պիտի ըլլայ այս կտորի իսկական վերնագիրը:

#### 66. Ո Ձ Ն Ի Ն Ո Ւ Օ Ձ Ը

1.

Ամառուան տաք օր մը: Արևի կիզիչ շողերը այրեր, մըրկեր էին արտ ու արօտ:

Շուրջը ձայն ու ձուկն չը կար, կարծես տաքէն ամեն ինչ մեռեր էր ու անշարժացեր: Գիւղի առջևէն հոսող վտակի վշտոցն անգամ կտրուեր էր, կարծես ան ալ թմրեր էր ու պապանձեր:


Օրուան այդ տօթին էր, որ գիւղի բոլոր երեխաները հաւաքուեր էին ձորին գլուխը ու կը նայէին վար :

Վարը ձորին մէջ կը կռուէին ողնին ու օձը :

2.

Կռիւր կատաղի էր : Օձը կը սուլէր, թռիչքներ կ'ընէր փշոտ ողնին շուրջը, բայց ոչ մէկ կերպ չէր կրնար բռնել : Ողնին ալ փոքրիկ գլուխը կը հանէր ու յարմար վայրկեանէն օգտուելով կը խածնէր օձին մէջքը, փորը, վիզը ու նորէն կը կծկուէր :

Վերջին անգամ փշերուն մէջէն դուրս հանեց ան իր սուր դունչը, յանկարծ պինդ բռնեց օձին պոչէն և իսկոյն կծկեցաւ : Օձը ինչ որ ըրաւ ալ ազատուիլ չը կրցաւ :




3.

Հետզհետէ օձը սկսաւ թռչնալ : Մարմնին վրայ բազմաթիւ վէրքեր կային, ալ չէր սուլեր, միայն կը ցնցուէր ամբողջ մարմնովը :

Ողնին կծկուեր էր ամուր՝ օձին պոչը միշտ պինդ պահած : Բաւական ժամանակ անցաւ, մինչև որ օձը բոլորովին անշարժացաւ : Սատկեր էր :

Ողնին բաց թողեց վերջապէս անոր պոչը, զգուշութեամբ քանի մը անգամ հանեց գլուխը, դիտեց շուրջը, նայեցաւ օձին, գնաց ու ծածկուեցաւ մօտի թփերուն տակը :

Ողնին ու օձը ինչո՞ւ կը կռուին :



Ճարպիկ սարդը ցանց կը յինէ երկար-բարակ ոտքերով . կարօտցածը ճանճի համն է, բան չէ կերեր օրերով : Շրջան կու տայ, շրջան կու տայ, նուրբ թելերը կը նետէ, ապին կու գայ, անգին կ'երթայ, մինչև գործը աւարտէ :


Ձիգ կախեր է, տես, գերանէն . ինչ արուեստ է, ինչ ուստայն . ու ճանճերը ամեն կողմէն կու գան, տեսնեն՝ ի՞նչ է ան : Շրջան կու տան ու կը նային, վերէն, վարէն կը վզզան, կը նային ու կը կասկածին . ու շատ երկմիտ կը սզզան :

Իսկ վարպետը՝ մեր անօթին՝ անկիւն մըն է կծկտեր, ու անհամբեր ասդին, անդին, ժիր ճանճերը կը դիտէր, որոնք մէկ վեր ու մէյ մը վար բայց միշտ զգուշ կը թռչին, հասկցեր են, շատ մօտ չեն դար, կը տըզզան ու կը փախչին :

Ի՞նչ և՛ հասկցե՛ր ճանճերը : Սարդը ինչո՞ւ ուստայն կը շինէ : Մարդիկ ի՞նչ կը շինեն նոյն նպատակին հասնելու համար :

1.

Կաղամբի մը տերևին վրայ կ'ապրէր խխունջ մը :  
Այդ տերևին մէկ անկիւնը արդէն շատոնց ինկած էր  
պզտիկ դեղին հատիկ մը : Այդ հատիկը թիթեռնիկի ձու էր :



Տաք օր մը ձուէն դուրս  
սողաց փոքրիկ թրթուռ մը :  
Խխունջը զարմանքով կը  
նայէր այդ նոր արարածին .  
« Ի՞նչ չնչին, ի՞նչ ողորմելի  
բան է », կը մտածէր :

Իսկ թրթուռը շատ ուրախ էր : Ան կը սիրէր տաք արևը,  
իր կաղամբին տերևը ու երջանիկ էր :

Օր մը խխունջը մօտ եկաւ ու իր կոտորիկները շարժե-  
լով ըսաւ .

— Կը զարմանամ շիտակը՝ ինչո՞ւ ես այդպէս ուրախ :  
Մեր կեանքը բնաւ այդպէս թեթեւ չէ :

— Ինչո՞ւ . շատ լաւ է . — պատասխանեց թրթուռը : —  
Շուտով ալ սիրուն թիթեռ մը կը դառնամ , կը թռչիմ վեր ,  
արևի ոսկի շողերուն տակ . անի , ի՞նչ աղուոր պիտի ըլլայ :

Խխունջը երեսը անդին դարձուց , խնդաց ու մտածեց .

— Ի՞նչ ապուշ բաներ կ'ըսէ այդ յիմարը :

2.


Քիչ մը ժամանակ ետքը թրթուռի ուրախութիւնը կորաւ :  
Թմրեր ինկեր էր տեղ մը :

Անգամ մը խխունջը կ'անցնէր անոր քովէն իր բնակա-  
րանը ետէն քաշ տալով՝ երբ նկատեց , որ թրթուռը փաթ-  
թուեր է կաշիի նման բանի մը մէջ ու ինկեր է անշարժ :

— Ասանկ ալ յիմար . — բացականչեց խխունջը : —  
Կ'ըսէր թիթեռնիկ պիտի դառնամ , ինկեր , սատկեր է :

Անցաւ քիչ մը ժամանակ ալ , խխունջը բոլորովին մոռցեր  
էր արդէն իր դրացին և կ'ապրէր առաջուան պէս նոյն կա-  
ղամբին վրայ :

Օր մը , որ նորէն կ'անցնէր այն յիմար թրթուռի գերեզ-  
մանին մօտովը՝ յանկարծ զարմանքով կանգ առաւ : Թրթուռի  
պատուած կաշւին մօտիկը  
նստած էր սիրուն թիթեռ-  
նիկ մը և անոր կաթնա-  
գոյն թաւիշ թևերը գու-  
արթ կը փայլէին արևին  
տակ :




— Մ'նաս-բարով , խը-  
խունջ , ես կ'երթամ . —  
կանչեց թիթեռնիկը , թև-  
երը թեթեւ թափ տուաւ , բարձրացաւ վեր ու կորաւ արևի  
յորդ ու պայծառ շողերուն մէջ :

Փոքրիկ քրքուռը ինչո՞ւ ողորմելի կը բուեր խխունջի աչքին :  
Ուրի՞ւ ի՞նչ միջասներ գիտես , որոնք վերջը կը բեւաւորին :  
Ուրի՞ւ ի՞նչ կենդանիներ գիտես , որոնք պատեան ունին :  
Ինչո՞ւ համար է խխունջին կոտորիկները :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(11)

Պառաւը նստեր յատակին ,  
մուշտակը հագեր մուշտակին ,  
կ'ըսէ՝ կը մըրսիմ ,  
հն կը մըրսիմ :



## 69. ԱՂԲԻՒՐԸ

Մարի լանջին, ժայռի տակ,  
 ջուր կը բրխէր սառնորակ  
 ու ցրուելով խոտն ի վար՝  
 իզուր ճահիճ կը դառնար:


Հովիւն եկաւ ու խոր գուշ  
 շինեց դէմը ու անուշ  
 խազ ըսելով՝ հոն բերաւ  
 ջրեց հօտը իր ծարաւ:

Եղնիկն անցաւ այն սարէն  
 տարէն հանած չոր լեզուն,  
 կուշտ-կուշտ խմեց աղբիւրէն,  
 վեր նայեցաւ Աստծուն:

Անցւորն եկաւ օթակէտ,  
 սառն աղբիւրին, որ հասաւ,

կեցաւ, գլխարկը հանեց  
 խմեց, սիրտը հովացաւ:

Ու տուաւ իր օրհնանքը  
 անցւոր մարդը այն բարի՝  
 «Բու շինողիդ օր-կեանքը  
 ջրի նման երկարի»:



## 70. ԵՐԵՔ ԴԵՂՁ

Արուսեակը ցատկրաւելով վազեց իր սենեակը ու ձեռքի  
 երեք հատ դեղձը շարեց սեղանին վրայ, ինքն ալ կեցաւ դի-  
 մացը ու երկար կը դիտէր:

«Ի՞նչ լաւն են. չեմ ուտեր, կը պահեմ». ըսաւ ան ինքն  
 իրենը: Բայց քանի մը վայրկեան ետքը, դեղձերէն մէկը յան-  
 կարծ մօտեցուց բերնին ու խածաւ: Եւ շուտով կարմիր դեղ-  
 ձէն մնաց միայն խոշոր կորիզը:

«Մնաց երկու հատ. չէ, ալ չեմ ուտեր». հաստատ վճռեց  
 Արուսեակը, վերցուց դեղձերը ու վազեց խոհանոց:


Խոհանոցը կեցած էր լւացք ընող կնոջ փոքրիկ, գու-  
 նատ աղջիկը իր պատուտած հագուստներովը: Յանկարծ կար-  
 միր դեղձերէն մէկը սահեցաւ Արուսեակի ձեռքէն ու գլտոր-  
 ուեցաւ շիտակ աղքատ աղջկան կողմը: Արուսեակը արագ  
 ծռեցաւ, բռնեց դեղձը, ինքն ալ չիմացաւ ինչու՝ կարմրեցաւ  
 ու փախաւ խոհանոցէն դուրս:

Եւ երկար կը մտածէր: Ետքը ինքնիրենը ըսաւ.  
 «Աս մէկը ուտեմ, միւսը կը տանչմ անոր»:  
 Կերաւ մէկ հատը: Մնաց ամենէն մեծը, փափուկ ու սի-  
 րուն: Շուտով այդ վերջին դեղձէն ալ միայն կորիզը մնաց:  
 Արուսեակը, շփոթած վագեց մօրը սենեակը:  
 — Մայրիկ, դուն ըսիր, որ այս երեք դեղձերն ալ իմն են, չէ՞:  
 — Այո՛, աղջի՛կս:  
 — Եւ ինչ ուզեմ՝ կ'ընեմ, չէ՞:  
 — Այո՛, ի՞նչ կայ որ:

Արուսեակը ոչինչ չը պատասխանեց, բայց անհանգիստ էր շարունակ:

«Իմինս էր ու կերայ. ի՞նչ գէշ բան ըրի որ», կը մըտմտար ան՝ աշխատելով ինքրզինքը համոզէ: Բայց ինչ ալ որ կ'ընէր՝ աչքերուն առջեւէն չէր հեռանար լացարարին աղջիկը:

Ի՞նչ եր որ Արուսեակին հասցիս չէր տա: Ինչո՞ւ:



## 71. ՎԱՂՆԻՒՆ ՎԱՐՁԻՈՐՆԵՐԸ

Մեր ծեր կաղնին իր հին տունը ա՛յ, տուեր է չորս վարձուորի:  
 Արմատին մօտ ներքնատունը մուկն է բռներ այս տարի:

Անոր վրան խանութ ունի ատաղձագործ փայտփորիկը, թաք, թուք, թաք, թուք, հոն կ'աշխատի, հոն կ'անցընէ իր օրիկը:

Վերին յարկը՝ ըրած տիտիկ՝ շէկ սկիւռը կը բնակի. կաղին, ընկոյզ, սերմ ու հատիկ դիզած խորքը իր փշակի:

Թաւ ճիւղքին մէջ բոյն է դրեր վարպետ ու զիլ երգչին մէկը, ձայն կը մարզէ, կ'ըսէ երգեր... Իսկ վարձ չի տար եւ ո՛չ մէկը:

## 72. ԲԱՂԴԱՒՈՐ ՎՈՒՇԸ

1

Վուշը ծաղկեր էր. կապոյտ, փոքրիկ ծաղիկներ, թիթեռնիկի թեւերուն նման փափակ ու քնքուշ:

Արեւին շողը կը գգուէր անոր դէմքը, ցօղի կաթիլը կը փայլփլէր անոր կրծքին, և վուշը հրճուանքի մէջ էր:

— Ի՞նչ ազուոր է արեւը, ի՞նչ անուշ է ցօղը: Ձէ՛, աշխարհիս երեսին ինծմէ բազմաւորը չը կայ:



2

Բայց օր մը եկան մարդիկ, բռնեցին վուշը ու արմատով դուրս քաշեցին հողէն:  
 «Վերջացաւ». մտածեց վուշը:

Կոխեցին շուրը, կարծես խեղդել կ'ուզէին, ետքն ալ դրին արեւին տակը, որ չորնայ:

Բայց բանը ատով ալ չը լմնցաւ. խեղճը բռնեցին փառաւոր թակեցին, վերջը զգգեցին, սանրեցին, անցուցին ձախարակին ու ՓՐ՝ ո, հա ՓՐ՝ ո մանեցին: Վուշը դարձաւ թեյ: Թեյն ալ՝ որ հանեցին ու զործեցին՝ դարձաւ կտոր մը ձերմակ կտաւ:

— Աս ինչ սիրուն բան էրայ.— կը զարմանար վուշը ինքն ալ.— թէև մինչեւ շինեցին՝ հողիս հանեցին:

Քիչ մը ետքը կտաւը առին, չափեցին, ձեւեցին, մկրատով կտրեցին, ասեղով ծակծկեցին և վերջապէս պատրաստեցին սիրուն շապիկ մը: Իրին խանութին ցուցափեղկը:

— Դէ՛, հիմա ինծի նայեցէ՛ք. — ուսեր փքուեր էր անիկա՛ ցուցափեղկին մէջ պառկած:

— Չէ՛, աշխարհիս երեսին ինծմէ բաղդաւորը չը կայ:

## 4

Տարիներ անցան. շապիկը հագան ու մաշեցին: Թերերը արդէն քրքրուեր էին ու իրարմէ կը զատուէին:

Շապիկը դարձաւ քուրջ: Այդ քուրջով դռներն ու պատահանները կը սրբէին. օր մըն ալ նետեցին աղբանոցը:

«Վերջացաւ». կը մտածէր վուշը տխուր-տխուր:

Այդ միջոցին էր, որ մէկը եկաւ փայտին ծայրովը վերցուց գետնէն քուրջին կտորը, նետեց իր շալակի զամբիւղը ու տարաւ:

## 5


Խեղճը մանր-մանր կտրտեցին, լեցուցին ջրի մէջ, եփեցին, խառնեցին, քամեցին, լւացին, չորցուցին, փռեցին հարթեցին, ճզմեցին, մինչեւ որ դարձաւ երկար-բարակ ճեպ-ճերմակ թուղթ:

— Վա՛յ, այս ինչ սիրուն բան դարձայ. — կը մտածէր վուշը: — Չէ, ինծմէ բաղդաւորը չը կայ աշխարհիս երեսին:

Թուղթը հաւասար կտրեցին, թերթ-թերթ դիզեցին, կապեցին, տարին տպարան, քաշեցին մեքենային տակը ու վրան գիրեր տպեցին: Ետքն ալ ծալեցին, կարեցին, կազմեցին, եղաւ գիրք:

Ահա այդ գիրքն է հիմա քու առջեւդ, որուն վրայ կը կարդաս դուն բաղդաւոր վուշին պատմութիւնը:

Իսկ վուշի սերմէն ինչ կը պատահես:



## 73. Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ Ն Ե Ր Ը

Կոտ ու կէս կորեկ ունիմ ցանելու համար,  
ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,  
ծուեցայ քար մը առի գարնելու համար:

Կտրիճներ դանակ բերին մորթելու համար,  
աղջիկներ թեւ քաշեցին փետրելու համար,  
պառաւներ պղինձ դրին եփելու համար:

Դուռ-դրկից շուրջ բազմեցան ուտելու համար,  
տէրատէրներ խաչով եկան օրհնելու համար,  
աշուղներ սագով եկան զովելու համար:

Այ, ճնճղուկիկ,

կարմիր տոտիկ,

ճերմակ փորիկ,

ուտեն կուտիկ,

խմեն ջրիկ

առի եզրիկ,

պգտիկ - մզտիկ,

փախչին երթան ման գալու համար:

Ի՞նչի մեջն է այս կտորի կատակը

## 74. ԿԵՍ ԽՆՁՈՐ

1.

Քանի մը աղջիկ ու տղայ խմբուեր էին դասարանը վա-  
աարանին մօտիկ : Յուրա առտու մըն էր : Ուրախ-ուրախ կը  
խօսէին ու կը խնդային իրարու հետ :

Անոնցմէ քիչ մը հեռու , բոլորովին առանձին , կեցեր էր  
նորեկ աշակերտուհի մը , որուն վրայ հիները կարծես ոչ-մէկ  
ուշադրութիւն չէին դարձներ . երբեմն մէկը կամ միւսը թէն  
կը նայէր աղջկան կողմը , բայց ոչ մէկը հետը չէր խօսեր :

Նորեկը այս առաջին անգամն էր , որ ոտքը կը դնէր դըպ-  
րոց : Մայրը բերեր էր ու դեռ նոր էր հեռացեր : Աղջիկը հի-  
մա շատ մինակ ու անյարմար կ'ըզգար ինքըզինքը այդ օտար  
սենեակին ու այդ օտար բազմութեան մէջ : Միտը սաստիկ  
խրենց տունը կ'ուզէր , կ'ուզէր ամէն բան թողնէ ու վագէ  
երթայ նորէն իր մօրը ետևէն :

Աչքերը սկսան լեցուիլ և արդէն մօտ էր արտասուելու ,  
երբ յանկարծ դասարանին դուռը թափով մը բացուեցաւ ու  
ներս նետուեցաւ սևաչուի կարմրաթշիկ աղջիկ մը :

Գնաց շիտակ դեպի վառարանը ու ձեռքերը տաքցնելով  
սկսաւ խօսք ու կատակի հոն կեցած խումբին հետ .

2.

Մէյ մըն ալ յանկարծ աչքին ինկաւ նորեկ աղջիկը : Իս-  
կոյն մօտեցաւ անոր :

— Բարև . — ըսաւ անուշ ձայնով մը ու շատ սիրալիր :

— Բարև . — պատասխանեց աղջիկը ու դէմքը ահամայ  
պայծառացաւ :

— Յուրա է , չէ՞ , — ըսաւ սևաչուին . պայուսակը հանեց  
ուսէն , դրաւ սեղանին , ձեռքերը քիչ մը շփեց ու անմիջա-  
պէս գրպանին խորքէն դժուարով դուրս քաշեց խոշոր խըն-  
ձոր մը :

Հանեց , կիսեց , ու ժպտելով կէսերէն մէկը երկընցուց  
նորեկին . — Կը սիրե՞ս , չէ՞ , խնձոր :

— Այո . — պատասխանեց նորեկը վերցնելով խնձորը :

— Իմ անունս Հուսիկ է . — ըսաւ խնձորին տէրը . —  
իսկ քուկի՞նդ :

— Իմ անունս Սեդա է :

— Ատ ի՞նչ աղուոր անուն ունիս : Նայէ , իմ քովս ապա  
տեղ մը կայ . կ'ուզե՞ս՝ մօտս նստիս :

— Միտով :

Ու երկու աղջիկները միասին զացին նստեցան Հուսիկի  
նստարանին վրայ իրարու քովիկ , կը կրծէին իրենց խնձորը  
ու կը քչփչային իրարու հետ , մինչև որ հնչեց դասին գանգը :

3.

Ուսուցիչը ներս մտնելուն պէս աչքը պտտցուց դասարա-  
նին վրայ , կարծես մէկը կը փնտռէր : Տեսաւ նորեկը Հուսի-  
կի կողքին , նայեցաւ անոնց զուարթ աչքերուն ու ժպտեցաւ .

— Ոչինչ . լաւ ընկեր ես ձարեր :

Եւ այդպէս ալ էր :

Հուսիկը , որ հիմա մեծցեր է ու դարձեր է արդէն կին ,  
դարձեր է տիկին Հոսիսիմէ , ինքն էր , որ պատմեց ինծի  
այս պատմութիւնը . և աւելցուց՝ թէ ինչպէս կէս խնձորով ձեռք  
էր բերեր իր ամբողջ կեանքի լաւագոյն ու մտերիմ ընկերուհին :

ձիւս է , կես խնձորով եւ ձեռք բերելու իր ընկերուհին :



— Ո՞ւր կը վազես  
այդպէս արագ,  
այ դուն կայտառ,  
սիրուն գետակ,  
կանգ առ, խաղանք  
այս ծառին տակ:

« Զէ, փոքրիկըս,  
երթամ պիտի.  
տես, ջաղացը  
գիւղին մօտի,  
պէտք է ուժ տամ,  
որ պըտրտի:

« Իսկ հովտին մէջ  
անուշահոտ  
ծարաւած են  
ծաղիկ ու խոտ,  
յոզնած — դաղրած  
տաւարն ու հօտ:

Ուրիւ ալ ի՞նչ կրնաս յիշե՛ր գետի հագար գործերէն:

« Սառն աղբիւրը  
բարձրիկ սարէն  
անոնց համար  
կու տայ արդէն  
իր զով ջուրը  
կարկաջելէն:

« Իսկ կամուրջի  
տակն ալ, որ գայ՝  
կայ լւացքը  
պառաւ կնկայ,  
պէտք է լըւամ  
քանի լոյս կայ:

« Դէ, կը տեսնես,  
մնաս — բարով,  
ճամբաս ցանած  
հազար գործով,  
դաղար չունիմ  
ես մինչև ծով: »

ՀԱՆԵԼՈՒԿ

(12)

Ոտքեր չունի կը քայլէ,  
բերան չունի կը կլլէ,  
ան ի՞նչ է ան,  
օրան-օրան  
դաղար չունի դառնալէ:

1

Եղբայրներս իրենց ընկերներուն հետ խօսք էին կապեր,  
որ երթան մոշ հաւաքելու: Այնքան ըրի, որ համաձայնեցան  
ու ինձի ալ հետերնին առին:

Յուլիսի կէսն էր: Մորին արդէն վերջացեր էր. մոշն ա  
աւելի բարձր տեղերը կը գտնուէր միայն:

Արևը հազիւ դուրս էր նայեր դիմացի լեռան ետևէն, երբ  
մենք ամարանոցները թողինք: Շարունակ բարձրանայինք  
պիտի: Շուտով հասանք վերի արտերը:



Հոն հունձը դեռ նոր կ'ընէին: Գիւղացիք մանգաղները  
ձեռքերնին կը ծռէին, կը հնձէին, դրկերուն մէջ կը ժողվէ-  
ին, ապա խուրձերը կը կապէին ու ցից կը կեցնէին արտին  
մէջը:

— Բարի յաջողում. — ողջունեցինք մենք:

— Աստու բարին. պատասխանեցին հնձուորները միբերան:  
Անոնցմէ մէկը բաժնուեցաւ ընկերներէն ու ըստ սովորու-  
թեան ահագին խուրձ մը բարձր պահած բերաւ մեզի՝ իբրև  
նուէր:

Եղբայրս մանր արծաթ մը տուաւ ու առաջ անցանք:

Շաւիղը աւելի թեք կը դառնար ու հետզհետէ կը կորսուէր թփերուն մէջ :

Մէյ մըն ալ ետ նայեցայ :

Վարը կ'երեւային գիւղերը իրենց հողէ տափակ կտուրներով, տեղ-տեղ միայն կարմրին կու տար կղմինտրով ծածկուած տանիք մը : Սայլի ճամբան ոլոր-մոլոր կը ձգուէր գիւղերուն մէջէն : Դաշտին ու արտերուն մէջ շարք-շարք բազմեր էին խոտի դէպերն ու ցորենի բարդերը . մէջէմէջ գորգերու նման, սև-սև փռուած էին նոր վարած ցելերը : Հեռո՛ւն, դիմացի սարի անտառներուն մէջէն շիփ-շիտակ ծուխ մը կը բարձրանար վեր. ամխարարները ամուխ կը պատրաստէին :

2 .

Շաւիղը կորսնցուցինք : Կը մազլցէինք՝ թփերէն բռնելով ու իրարու ձեռք տալով. կը քաշքշէինք իրար ժայռէ ժայռ. վերջապէս տեղ հասանք :

Տէր Աստուած, ինչքան մոշ կար : Թփերը ամբողջովին կարմրեր էին : Իսկոյն ցրուեցանք, մէկ կողմէ ազահութեամբ սկսանք ուտել հիւթալի, բոլորովին սև թութի նմանող, պլտուղները, միւս կողմէն ալ կը հաւաքէինք մեր զամբիւղներուն մէջ :

Կ'երգէինք, կը սուլէինք, ծիծաղ ու կատակ, իրար կը հրէինք փշոտ թփերուն վրայ :

Չը նկատեցինք ալ՝ թէ ինչպէս լեցան մեր զամբիւղները բերնէ բերան : Ծածկեցիք թարմ տերեւներով ու ճամբայ ինկանք :

Որոշեցինք՝ իջնենք լեռան միւս լանջովը, ուր գետակ մը կը վազէր . լողնալ կ'ուղէինք պաղ ջրին մէջ :


Անցանք միւս լանջը : Հոն աւելի անտառոտ էր : Հեռուէն, կը լսուէր կրկնուող ու կանոնաւոր զրնգոց մը :

— Տղաք, խոտ կը հարեն. — կանչեց մեր առաջնորդը : Եւ ճիշտ որ քիչ մը ետքը ծառերուն տակէն դուրս եկանք

ընդարձակ բացուտ մը : Խոտ հարողները, կուրծքերնին բաց, գունաւոր թաշկինակներով գլուխնին կապած, իրարմէ հաւասար հեռաւորութեան վրայ քայլ-քայլ առաջ կ'երթային՝ երկար գերանդիները կանոնաւոր շարժելով : Անոնց ամէն մէկ շարժումին բարձր ու հիւթեղ խոտը կիսաշրջան կը փռուէր գետին՝ թարմ ու անուշ հոտ մը տարածելով :

3

Նորէն մտանք ծառերուն տակը : Ծառերը աւելի ու աւելի խիտ ու վիթխարի կը դառնային : Անտառին գովութիւնը անչափ ախորժեղի էր :



Յանկարծ երեսնուս զարկաւ ջրին խոնաւութիւնը : Չըր-վէժի մը շառաչը խառնուեցաւ տերեւներու սոսափիւնին և թռչուններու երգին :

— Գետակը, գետակը, տղաք . հապա տեսնենք՝ ո՞վ աւելի շուտ կը հասնի :

Բոլորս ալ սկսանք վար վազել : Էջքը դժուար էր . ոտքս կը սահէր, շուտ-շուտ ամուր կը բռնէի թփերէն ու ծառերու բուններէն, որ չըլլայ թէ յանկարծ զամբիւղս թափեմ :

Քարքարոտ ձորի խորքին կայտառ կը ցատկատէր լեռնային վտակը :

Չամբիւղս արևին տուքէն պահեցի թուփի մը տակ ու քարէ-քար թռչկոտելով հասայ ընկերներուս: Շրջակայ քարերը շուտով ծածկուեցան մեր գոյնզգոյն հագուստներովը. շապիկ, վարտիք, գուլպայ, գլխարկ, փողկապ ամեն կողմ: Ու գրեթէ միաժամանակ բոլորս ալ թափուեցանք շուրը:

Պահէն ճշացի: Ու ալ ի՛նչ պոռալ-կանչել. իրար շուրը կը կոխէինք, իրարու վրայ շուր կը սըրսկէինք, կը սուզուէինք ջրին տակը, կը պառկէինք մէջքի վրայ, դուրս կը վազէինք ափը ու նորէն կը նետուէինք վտակը. կ'անցնէինք ջրվէժին տակը ու կը թաղուէինք փրփուրին մէջ:

Մեծերը նկատեցին, որ ես ցայտերէն շատ կը վախնայի, բոլորն ալ յարձակեցան վրաս ու շուր կ'ընէին աչքերուս, քիթ ու բերնիս: Շունչս կտրուած դուրս նետուեցայ ջրին մէջէն, վազեցի հեռուն, նստեցայ չոր քարի մը գլուխը ու տաքնալ սկսայ արևին տակ: Ետքը կամաց մը մօտեցայ, հագուստներս արագ ժողվեցի ու փախայ լողցողներուն քովէն:

Այնպէս թեթև կ'ըզգայի ինձի լողնալէս ետքը, ո՛չ-մէկ յոգնածութիւն: Ախորժակս բացուեր էր: Կ'ըշտապեցնէի միւսները, որ դուրս գան շուտով նստինք հացի:

Ուտելիքները շարեցինք կանաչ խոտերուն ու լայն-լայն տերևներուն վրայ, նստեցանք ծառերուն խիտ սաղարթին տակը և անուշ ճաշ ըրինք:

Ծարաւէինք թէ չէ՞ կը վազէինք վար դէպի վտակը, ուր անագին քարի մը տակէն պաղուկ աղբիւր մը կը բխէր. կը ծռէինք, բերաննիս դէմ կու տայինք վճիտ ակին ու կը ծծէինք:


Հացէն ետքը, երբ ամենքը ցրուեցան հոս ու հոն, առի զամբիւղս տարի հաստարմատ թխկիի մը տակ ու ինքս ալ կողքը երկընցայ կիսաչոր խոտին վրայ:

Անտառը լեցուն էր մեղմ ձայներով. երբեմն հովիկը կամաց մը կը սըւսըւացնէր ճիւղերը: Եւ իսկոյն քնացայ. առտուն շատ կանուխ էի արթնցեր:

— Հէյ, էյ, ժամանակ է, ժամանակ, տուն. — կը կանչէր ուժեղ ձայն մը:

Անմիջապէս վեր թռայ...

Մերք իջեր էր արդէն, երբ վերէն կը լճօտենայինք մեր գիւղին:



Խրճիթներուն բակերէն կը բարձրանար ծուխի սիւնը. հովը կաշերէն դարձանի փողին կը ցանէր հեռուն. նախիրը կը մտնէր գիւղը:

Գիւղը աղմուկ էր. հորթերուն բառաչը, շներու հաջը: Ծիծեռնակները ամբողջ երամով կը սլանային օդին մէջ. պտոյաներ կ'ընէին ու սուր կը ծղրղային:


Իսկ գիւղի աղբիւրին գլուխը հաւաքուեր էին հարսներն ու աղջիկները սափորներն ու կուժերը ուսերնուն:

Մեր ամարանոցի սանդուխներուն վրայ մայրիկս կ'ըստպասէր մեզի: Տեսնելուս պէս վազեցի վրան ու զամբիւղս դրի առջևը:

— Նայէ, մայրիկ, ինչքան մոշ եմ բերեր քեզի համար:

Քանի մը ժողովրդական բառերու ու ասոյքներու, որոնք դեռ նոր մտնելու վրայ են մեր գրական լեզուն եւ որոնք գործածուած են մեր նախորդ յօդուածներուն մէջ

- Քաց ու խուփ լնել = Բանալ գոցել (աչքը, բերանը):
- Քուտ = Աղբիւրին առջևը շինուած փոքրիկ աւաղան հողէ ու քարէ, կամ փորուած գերանէ մը:
- Քլուխ-կոնձի սալ = Գլուխը դնել գետին ու դրսորդի. (քախա):
- Ջրնգոց = Մեառողի մը հանած զրընգ ձայնը. հոսկէ՝ գրնգալ, գրնգան:
- Թակել = Ծեծել. քակ = դուռը դարնելու երկաթը (չախչախ):
- Թափուց = Ծածուկ. նոյն արմատէն՝ թաքուտ. թաքչիլ:
- Խուլնիկ-մուլնիկ = Նաղանքով կամ քծնանքով կտարուիլ:
- Ծամօն = Ծամկու ձիւթ:
- Ծառս ըլլալ = Ետեւի ոտքերուն վրայ կենալ. ծառանալ:
- Ծեղ ու ծղօս = Ոտերու ու ձողուններու չորցած կտորանքը:
- Կիսար = Կէսուակէս, կիսովին:
- Կռանալ = Ծուխ ինքն իր վրայ:
- Հոն = Գլխարկ կարող:
- Ման գալ = Պարտիլ. ման սալ = մանել, առանցքին վրայ դարձնել:
- Նարմանագուկ = Նազ՝ նազիկ բառէն. քնքուշիկ:
- Շալակար = Վարդեալին ետեւէն գործիքներն ու ապրանքը չալկած տանող աշկերտ կամ ծառայ:
- Շուռ գալ = Դառնալ. շուռ սալ = դարձնել. հոսկէ՝ շուռ ու մուռ սալ = ասղին-անղին դարձնել:
- Տաղել = Տաք երկաթով մը մարմինը այրել, խարել:
- Տափ = Գետին. հոսկէ՝ տափել = գետինը ծեծել (պոչով), հոսկէ՝ տափան. նոյն արմատէն՝ տափակ, տափարակ:
- Տանուէր = Գլուղի ընտրած կառավարիչը. գիւղապետ, բէս:
- Տկլոր = Մերկ:
- Տրցամ սալ = Վրան շուք սրակել, սր փափկիլ:
- Փուլ գալ = Փլչիլ. փուլ սալ = փլցնել:




✓ 1* Հրածեղա . Շիլլեր-էն . . . 3	25 Նոր վարժուհին . . . . 31
2 Ծիծեռնակներու չառն . . . 3	26* Ամպն ու սարը . . . . 32
3* Գպրցի ճամբան . . . . 5	27 Քեռի Սիմօնի նապաստակը 33
4 Դասի սանն . . . . 5	28* Աղքատ կինը ,
5 Անճարակին արբարացումը . 6	ըստ Մ. Նալբանդեանի . . . 36
6 Փոքրիկ խոնու թպանը . . . 7	29 Իշուկի դանդաղ . . . . 37
✓ 7* Աչուը . . . . 9	30* Բաց նամակ մը ամենուն . 39
8* Աղուէնն ու իր պոչը ,	31 Ածխարանն ու պարոնը ,
Ս. Խնկոյեան-էն . . . . 10	ըստ Ամիշխ-ի . . . . 40
✓ 9 Սուսասն . . . . 12	32* Ուր էն . . . . 42
10* Գիշեր . . . . 13	33 Ձմեռը . . . . 43
11 Ջուրը փախաւ . . . . 14	34 Որսի . . . . 44
12 Ամպի երկխաները . . . . 14	✓ 35* Կաթիլ մը մեղր . . . . 46
13 Վէճ . . . . 15	✓ 36* Կանաչ աղբար . . . . 52
14* Աշանն վերջը . . . . 16	37 Մշտական ճամբորդ . . . 52
15 Եկեղեցին կորեր է ,	38* Ամպերը . . . . 55
ըստ Էլզա Ֆրապանի . . . 16	39 Առիւծի երազը . . . . 55
16 Մարդ չը կայ . . . . 17	40* Մարտը . . . . 57
17 Շաղկապար . . . . 18	41 Կարծեմ . . . . 57
✓ 18* Պողոս—Պեարոս . . . . 20	42 Թէ ինչու կը ծաղկին . . . 58
19 Համիլի աղօթքը . . . . 23	43* Մանուշակ, Դոսոխեան-էն . 59
✓ 20 Կացին աղբարը . . . . 24	44 Ձիու արտունջը . . . . 60
21* Քամին ու մարազը ,	45* Արօր, Բաճափ-էն . . . . 61
Ս. Խնկոյեան-էն . . . . 25	46 Արագիւնները, ըստ Անդրեանի 62
22 Աղուէսը բաժանարար . . . 26	47* Արագիլ . . . . 66
23 Դրամ . . . . 27	48 Հապիկի դարձնումը . . . 67
✓ 24* Շունն ու կատուն . . . . 28	49* Արջը ու մարգրիտ . . . 68

✓ 50 Մժղուկը , բառ Մ. Սիբիրեակի . . . . . 68	63* Ծխախոտի երազը . . . . . 88
51* Գիւղացին ու արջը , Ա. Խնկոյեան-Լէն . . . . . 72	64 Խրատ-խրակը . . . . . 89
52 Կարմրակատար . . . . . 74	65* Ջահաակը հոճերները . . . . . 91
✓ 53* Թռչունի մը մտածմունքը . . . . . 76	66 Ոգնին ու օձը , բառ Յ. Ապրեսեան-ի . . . . . 91
54 Անճոռնի ճուտիկը . . . . . 77	67* Սարգի ստապիր . . . . . 93
55* Տղան ու արեւը . . . . . 79	68 Թրթուռն ու խխունջը . . . . . 94
56 Երկրի շորջը . . . . . 80	✓ 69* Ազրի բլուր . . . . . 96
57* Ուշացած ճամբորդ . . . . . 80	70 Երեք դեղձ . . . . . 7
58 Գամին սրամութիւնը . . . . . 81	71* Կաղնիին վերձերները . . . . . 98
✓ 59* Ուրազ ու սղոց . . . . . 82	72 Բազմաւոր վուշը . . . . . 99
60 Մըջնոց . . . . . 83	✓ 73* Ճնճղուկները . . . . . 101
✓ 61* Փխածն . . . . . 84	74 Կէս խնձորը . . . . . 102
62 Կատիկը . . . . . 85	✓ 75* Գետակը . . . . . 104
	76 Մոջ հաւատքերու . . . . . 105

ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐԸ

- |                     |            |
|---------------------|------------|
| 1. Գիրք ու տառեր    | 7. Այգի    |
| 2. Բողկ             | 8. Յորին   |
| 3. Երկինք ու աստղեր | 9. Կրկայ   |
| 4. Պատրոյկ          | 10. Մըջնոց |
| 5. Դգսլ             | 11. Կաղամբ |
| 6. Արա              | 12. Գետ    |



2013

3676

« Ազգային գրադարան »  
  
 NL0062327

ԼՈՒՍԱԲԵՐԻ ՇԱՐՔԷՆ

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵՐ

Լուսարեր, Այրրենարան

64 էրես, 80 պատկեր եւ բազմաթիւ ձեւագիւղներ, Գին 100 փաւս

Լուսարեր, Հնթերցարան Ա. Տարի

80 էրես պատկերազարդ 4 դրուտ

Լուսարեր, Հնթերցարան Բ. Տարի

112 էրես պատկերազարդ 5 դրուտ

Լուսարեր, Գրաւոր վարժուէրիւններ Ա. Տարի

48 էրես շարադրական պատկերներով 2 դրուտ

Լուսարեր, Գր. վարժուէրիւններ, Բ. Տարի

48 էրես շարադրական պատկերներով 2 դրուտ

Լուսարերի Ուղեցոյցը

Գրեկ-կարգալ սովիցնելու եղանակը 10 դրուտ